

ԱԿՆԱՐԿ

**ԹՈՒՐԲԵՌՈՅ ՈՒՂՂՈՒՄԸ
ԿՈՉԱԿԱՆ ՍՊԱՌՆԱԼԻՔՆԵՐ**

Անգարա-Մոսկուա ռազմավարական դաշինքի գործարքային մասը՝ «Էս-400» հակաօդային պաշտպանության համակարգերու առումով առ այս պահը զուտ յայտարարողական մակարդակի վրայ անհանգստացուցած է Ուաշինկթոնը, որ պատժամիջոցներու կիրարկման մասին բարձրաձայնումները կատարէ։ Թէեւ պետք չէ մոռնալ Նախագահ Թրամփի կատարած յայտարարութիւնը այս մասին, որ Թուրքիոյ Նախագահը Մոսկուայի հետ ռազմական առջ ու վաճառքի առումով մեղաւոր չէ։ Պատճառաբանութիւնը՝ երկրորդական է այս պարագային. կարելորդ Անգարայի հետ կամուրջները բանուկ վիճակի մէջ պահելու վարքագիծի դրսեւորումն է։ Հիմա, Միացեալ Նահանգներու պաշտպանութեան Նախարարն է, որ կը հաւաստիացնէ, թէ Նախագահ Թրամփի Թուրքիոյ դէմ պատժամիջոցներ պիտի կիրարկէ՝ հիմնուելով օրէնքներու վրայ։ Այստեղ օրէնքը յստականշական է, այն առումով, որ կը յստակացնէ, թէ պատժամիջոցներ կը կիրարկուին Միացեալ Նահանգներու հակառակորդ երկիրներուն դէմ։

Կանխահաս է հաստատելը, որ Թուրքիան կը դասակարգուի Միացեալ Նահանգներու հակառակորդ պետութիւններու շարքին։ Պետք չէ մոռնալ, որ իրաւական ընթացակարգ չէ մտած Թուրքիան պատժելու որոշումը եւ թէ չի բացառուիր, որ յանկարծ շեղում արձանագրուի պաշտօնապէս կատարուող յայտարարութիւններէն։ Իրանի դէմ իրաձիգները բարձրացած էին երկինք, եւ յանկարծ հարուածելու գործողութիւնը չէզոքացուած էր Նախագահ Թրամփի կողմէ։ Պատժամիջոցներու որոշումի ուրազի՞ն է, որ կ'երեւայ այժմ պարզապէս։

Երանգային տարբերութիւն գոյութիւն ունի եւրոպական քաղաքական միջավայրերու մէջ՝ Թուրքիոյ նկատմամբ քաղաքականութիւնը խստացնելու առումով։

Եւրոպական Միութեան արտաքին գործոց Նախարարներու մասնակցութեամբ Պրիւքսելի մէջ կազմած արտաքին յարաբերութիւններու խորհուրդի նիստին ետք գրաւոր յայտարարութիւն տարածւած է, ըստ որուն՝ Եւրոպական Միութիւնը որոշած է միաժամանակ դադրեցնել Անգարայի հետ տեղի ունեցող բոլոր բարձր մակարդակի հանդիպումները, անոնց շարքին՝ Թուրքիոյ հետ օդային փոխադրութեան համապարփակ համաձայնագիրի շուրջ բանակցութիւնները, Եւրոպական Միութիւն - Թուրքիա գործընկերութեան խորհուրդի նիստերը։

Կը Նախատեսուի Նաեւ, որ Եւրոպական խորհուրդը կը նուազեցնէ 2020-ի համար Թուրքիոյ տրամադրուելիք ֆինանսական աջակցութիւնը։ Միեւնոյն ժամանակ Եւրոպական Ներդրումային դրամատան առաջարկուած է վերանայիլ Թուրքիոյ տրամադրուող նիւթական աջակցութեան պայմանները։

Այստեղ պատժամիջոցներ կիրարկելու մղիչ գործօնը առաւելաբար կը վերաբերի Կիպրոսի ջրային տարածքներուն մէջ Թուրքիոյ ձեռնարկած հորատման աշխատանքներուն։ Այդ աշխատանքները դադրեցնելու բազմակողմ պահանջները նկատի չեն առնուիր Անգարայի կողմէ։

Այստեղ եւս առայժմ դադրեցնել, յանձնարարել, Նախատեսել՝ կոչական բնոյթի յայտարարութիւններ են, որոնք Պրիւքսելը կ'ուղղէ Անգարային։

Մինչ Անգարան կը շարունակէ ռազմական առջ ու վաճառքն ու կիպրական ջրային տարածքներու մէջ հորատումի աշխատանքները։ Աւելի'ն. համաձայնեցնելով իր գործողութիւնները Մոսկուայի եւ Թեհրանի հետ, կը ձեռնարկէ դէպի Իրաք սահմանափակ ներխուժումներու կամ դէպի Սուրիոյ սահման ռազմական կուտակումներու։

Պատժամիջոցներու սպառնալիքի դրսեւորումները կրնան շարունակուիլ։ Թէ՛ Ուաշինկթոնը եւ թէ՛ Պրիւքսելը հեռու են դէմ Անգարայի հետ ուղղակի բախման կէտերէն։ Երկուքն ալ սակայն Իրանի ինւէական դաշինքի վերագործարկման կարելիութիւններուն վրայ կը շեշտեն, Թեհրանի նկատմամբ եւս բախման կէտերը շրջանցելու կամ ընդհանրապէս նման փուլէ խուսափելու համար։

Անգարայի արտաքին համարձակ քայլերը կրնան մեկնաբանուիլ ներքին հետզհետէ դիւրաբեկուող իրավիճակի զարգացումով։ Գերնախագահական լիազօրութիւններ ունեցող Էրտողանը արտաքին յաւակնոտ քայլերու կը դիմէ ներքին ամրակայութիւն վերաշահելու համար։

Քաղաքական ներքին անկայունութիւն ուրուագծող իրավիճակին վրայ կ'աւելայ Զրտական աշխատանքներու կուսակցութեան զինեալ գործողութիւններու վերսկսումի երետոյթը։ Որքան ալ հեռու երեւին բախման կէտերը, կը թուի, որ թելուզ յայտարարողական եւ կոչական պատժամիջոցային սպառնալիքներուն եւ ներքին անկայունութեան առաջնորդող Նախադրեալներու հրահրման մէջ որոշակի կապեր կան։ Անգարան հետզհետէ կը սպառէ ներքին-արտաքին յաւակնոտ քայլեր առնելու առաձգականութեան օղակներու օգտագործման միջոցները։

«Ա.»

**ԽՈՐՀՐԴԱՐԱՆԸ ՄԿՍԱՒ 2019-Ի ՊԵՏԱԿԱՆ ԱՄՎԱՐԿԸ
ՎԱՒԵՐԱՑՆԵԼՈՒ ԻՐ ԼԻԱԳՈՒՄԱՐ ՆԻՍՏԵՐՈՒՆ**

Խորհրդարանի Նախագահ Նեպիի Պըրրի երէկ Նախագահեց խորհրդարանի ցերեկային եւ գիշերային լիազումար նիստերուն, որոնց ընթացքին սկսաւ քննարկել 2019-ի պետական ամավարկը՝ ներկայութեամբ վարչապետ Սաատ Յարիրիի եւ կառավարութեան։

Շար.ը՝ էջ 3



**ԵՐԵՄՓՈՒՄԱՆ ՅԱԿՈՒ ԲԱԳՐԱՏՈՒՆԻ
ՀԱՍԱՒ ՈՒԱՇԻՆԿԹԸՆ**

ՀՅԴ Լիբանանի Կեդրոնական կոմիտէի ներկայացուցիչ, Երեսփոխան Յակոբ Բագրատունի, ընկերակցութեամբ Երեսփոխան Ալի Պեզգիի, հասաւ Ուաշինկթոն, ուր անոնք պիտի մասնակցին Խորհրդարանական ղեկավարութեան ֆորումին, ինչպէս Նաեւ հանդիպումներ պիտի ունենան Զոնկրեսի ղեկավարներուն եւ ըոնկրեսականներուն հետ։

Ուաշինկթոնի մէջ Երեսփոխաններ Բագրատունի եւ Պեզգի դիմաւորուեցան Միացեալ Նահանգներու մէջ Լիբանանի դեսպան Կապի Իսայի եւ Խորհրդարանական ղեկավարութեան ֆորումի կազմակերպիչ մարմնի մէկ պատուիրակութեան կողմէ։



**ՀԱՆԳԻՊՈՒՄ
ՄԻՋՈՅՆԵՐՆ ԷՏՏ**

Խորհրդարանական ղեկավարութեան ֆորումին շրջագիծին մէջ, Երեսփոխան Բագրատունի հանդիպում մը ունեցաւ Յայաստանի Հանրապետութեան Ազգային ժողովի Նախագահ Արարատ Միրզոյեանի հետ։

Հանդիպումին ընթացքին շեշտուեցաւ Լիբանան - Հայաստան խորհրդարանական կապերու բարելաւումն ու զարգացումը։ Զննարկուեցան փոխադարձ այցելութիւններու կարելիութիւնները, եւ Միրզոյեանի փոխանցուեցաւ խորհրդարանի Նախագահ Նեպիի Պըրրիի յատուկ յարգանքը հայ ժողովուրդին եւ անոր Դատին նկատմամբ։



**ԽԱՄՆԵՒԷ «ԲՐԻՏԱՆԻՈՅ ԾՈՎԱՀԷՆՈՒԹԻՒՆԸ
ԱՆՊԱՏԱՍԽԱՆ ՊԻՏԻ ՉՄՆԱՅ»**

Իրանի գերագոյն հոգեւոր պետ Մեյտի Ալի Խամենէի յայտարարեց. «Բրիտանիոյ նեղ ծովահէնութիւնը անպատասխան պիտի չմնայ»։

Խամենէի ուրբաթ օրւան **Նամազ**ի ընթացքին Իրանի բոլոր շրջաններէն եկած քարոզիչներուն եւ իմամներուն հետ հանդիպումի մը ընթացքին ըսաւ. «Եւրոպական



Շար.ը՝ էջ 2

**ՀՈՐՄՈՒՁԻ ՆԵՂՈՒՑԻՆ ՄԷՁ ԱՆՀԵՏԱՑԱԾ Է
ԷՄԻՐԱԾԱԿԱՆ ՔԱՐԻՒՂԱՏԱՐ ՆԱՒ ՄԸ**

«Անատոլու» լրատու գործակալութիւնը հաղորդեց, որ երկու օր առաջ Հորմուզի նեղուցէն անցած ատեն անհետացած է Էմիրաթական քարիւղատար Նաւ մը։ «Անոր ճակատագիրին շուրջ մտավախութիւններ գոյութիւն ունին», կը նշէ «Անատոլու»։



Շար.ը՝ էջ 2

ՊԱՔՈՒԻ ՄԷՁ ԿԱՅԱՑԱԾ Է ՎՐԱՍՏԱՆ-ԱԶՐՊԵՅՃԱՆ-ԹՈՒՐԲԵՒ ԵՈՒԱԿՈՂՄ ՀԱՆԳԻՊՈՒՄ ՄԸ

Պաքուի մէջ կայացած է Վրաստան-Ազրպէյճան-Թուրքիա եռակողմ հանդիպում մը։ Այս մասին կը հաղորդէ ազրպէյճանական «Մինվալ» կայքը՝ յղում կատարելով վրացի պաշտօնատարի մը։

Կը նշուի, որ քննարկուած են շրջանին մէջ գոյութիւն ունեցող հոլովոյթները, համագործակցութեան առնչուող հարցեր եւ մարտահրաւերներ։

Կողմերը համաձայնած են շարունակել աշխատանքը եռակողմ ձեւաչափի զարգացման եւ ընդլայնման ուղղութեամբ։

Յաջորդ հանդիպումը տեղի պիտի ունենայ յառաջիկայ տարի։

**ՀԱՍՏԱՏՈՒՄԸ Է ԱԶԳԱՅԻՆ
ԱՆՎԱՆԳՈՒԹԵԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ՄՇԱԿԱՆ ՄԻՋՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ
ՅԱՆՁՆԱԽՈՒՄՔԻ ԿԱԶՄԸ**

Հայաստանի Հանրապետութեան վարչապետին որոշումով հաստատուած են ազգային անվանագութեան ռազմավարութեան մշակման միջնադարական յանձնախումբի ստեղծումը, յանձնախումբի անհատական կազմը եւ գործունեութեան կարգը։

Շար.ը՝ էջ 3



**ՎԵՆԵՏԻԿԻ ՅԱՆՁՆԱԾՈՂՈՎԸ ԴԱՏԱԿԱՆ
ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՌՆՉՈՒԹԵԱՄԲ
ԿԱՐԾԻՔ ՊԻՏԻ ՆԵՐԿԱՅԱՅՆԷ, ԵՐԲ ՊԱՏՐԱՍՏ
ԸԼԼԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԴԱՏԱԿԱՆ
ՕՐԵՆՍԳԻՐՔԻ ՓՈՓՈԽՈՒԹԻՒՆՆԵՐԸ**



Վենետիկի յանձնաժողովը բեղմնաւոր գնահատած է Հայաստանի իշխանութիւններուն հետ աշխատանքը եւ դատական բարեփոխումներուն առնչութեամբ կարծիք պիտի ներկայացնէ, երբ պատրաստ ըլլան Հայաստանի դատական օրէնսգիրքի փոփոխութիւնները։

Շար.ը՝ էջ 3

**ՊԱՇՏՊԱՆՈՒԹԵԱՆ ՆԱԽԱՐԱՐԸ
ԸՆԴՈՒՆԱԾ Է ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ
ՄԻԱՑԵԱԼ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԴԵՍՊԱՆԸ**



16 յուլիսին Հայաստանի Հանրապետութեան պաշտպանութեան Նախարար Դաւիթ Տոնդեան ընդունած է Հայաստանի մէջ Միացեալ Նահանգներու արտակարգ եւ լիազօր դեսպան Լին Թրեյսին։

Շար.ը՝ էջ 3


**ԱՐՑԱՆԻ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԵԱՆ
ՆԻՍՏԻՆ ՆԱԽԱԳԱՀ ԲԱԿՕ ՍԱՀԱԿԵԱՆ
ՅԱՆՁՆԱՐԱՐԱԿԱՆՆԵՐ ՏՈՒԱԾ Է**



Արցախի Հանրապետութեան Նախագահ Բակօ Սահակեանի Նախագահութեամբ 16 յուլիսին տեղի ունեցած է կառավարութեան նիստ։

Արցախի Նախագահի մամլոյ գրասենեակէն կը յայտնեն, որ նիստի օրակարգին վրայ ընդգրկուած հարցերու քննարկման ընթացքին Նախագահը յստակ յանձնարարականներ տուած է շահագրգիռ մարմիններու ղեկավարներուն՝ անոնց պատշաճ լուծման ուղղութեամբ։

ՆԱԽԱԳԱՀ ԱՌԻՆ. «2020-Ի ՊԵՏԱԿԱՆ ԱՄԱՎԱՐԿԸ ՊԵՏԻ ՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԵԱՄԲ ՃՇՂՈՒԹՅԹԻՆ»



Հանրապետության նախագահ զոր. Միշել Աուն երեկ նախագահական պալատին մեջ ընդունեց Դրամատուներու սեփականատերերու միության նախագահ Սելիմ Սֆեյրը՝ ընկերակցությամբ միության նորընտիր վարչության:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան երկրին մեջ տիրող ընդհանուր իրավիճակն ու դրամատուներուն աշխատանքը:

Նախագահ Աուն շնորհալորեց բոլորը՝ մաղջելով, որ Դրամատուներու սեփականատերերու միության նոր վարչությունը կը յաջողի գործադրել միության նպատակները:

Նախագահ Աուն ընդգծեց Լիբանանի տնտեսական կենսքին մեջ դրամատուային մարզին կարելությունը, ինչպես նաեւ տարբեր դրամատուներու միջեւ գործակցության անհրաժեշտությունը՝ պաշտպանելու համար երկրին ելեմտական կայունության:

Նախագահ Աուն շեշտեց երկրին տնտեսական կացությունը ամրապնդելու կարելությունը՝ յատկապես 2019-ի պետական ամավարկին ստանալիք վաւերացումէն ետք:

Ան շեշտեց, որ 2020-ի պետական ամավարկը պիտի պատրաստուի սահմանադրութեամբ ճշդուած թուականին՝ աւելցնելով, որ անկէկա պիտի ըլլայ հաւասարակշռուած եւ բարեկարգումներ պարունակող ամավարկ մը:

Նախագահ Աուն ընդգծեց, որ Լիբանան պիտի կարենայ շրջանցել իր դիմագրաւած տնտեսական տագնապը՝ գործակցելով բոլորին հետ, յատկապես անոնց, որոնք երկրին շահերը ամէն բանէ վեր կը դասեն:

Նախագահ Աունի այցելեց նաեւ Մարդկային իրաւունքներու ազգային խորհուրդի մէկ պատուիրակույթին, որուն ներկայութեան հաստատեց, որ մարդկային իրաւունքները յարգող պետութիւն մը ըլլալու Լիբանանի վարկը մեծ կարելություն կը ներկայացնէ, «եւ պետք է այդ իրականութիւնը ամրապնդել», աւելցուց ան:

Նախագահ Աուն ընդունեց նաեւ լիբանանեան բանակի հրամանատարութեան մէկ պատուիրակութիւնը, որմէ ստացաւ Լիբանանի անկախութեան տոնակատարութեան նախագահելու հրաւերը:

ԲԱՆԱԿԻ ՀՐԱՄԱՆԱՏԱՐԸ ԲՐԻՏԱՆԻՈՅ ԵՒ ՄԻԱՅԵԱԼ ՆԱՀԱՐԳՆԵՐՈՒ ԳԵՄՊԱՆՆԵՐՈՒՆ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՑ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԸ



Բանակի հրամանատար զոր. ժողգէ Աուն երեկ հանդիպում մը ունեցաւ Լիբանանի մեջ Միացեալ Նահանգներու դեսպան Էլիզապեթ Ռիչըրտի եւ Բրիտանիոյ դեսպան Ջրիս Ռամպլինկի հետ՝ սահմանապահներու Բ. զորամասի գորակցին մէջ:

Հանդիպումին ընթացքին քննարկուեցան լիբանանեան-սուրիական սահմանային ապահովութեան ծրագիրն առումով արձանագրուած յառաջդիմութիւնները, ըստ բրիտանական դեսպանատան հաղորդագրութեան:

Հանդիպումէն ետք Ռամպլինկ յայտնեց, որ իրենց համար պատիւ է այցելել լիբանանեան սահմանապահ ուժերուն զօրանոցը՝ աւելցնելով, որ այդ ուժերը ՏԱՅԵՇ-ի եւ Ժապիաթ Նուրայի դէմ զինուորական իրենց գործողութիւններով յաջողութիւններ արձանագրեցին եւ կրցան ապահովել «Բարձունքներու արշալոյսը» գործողութեան յաջողութիւնը:

Ռամպլինկ բարձր գնահատեց լիբանանեան-սուրիական սահմանին վրայ արձանագրուած նուաճումները՝ շեշտելով, որ այդ յաջողութիւնները կը մարմնաւորեն լիբանանեան բանակին վստահութիւնը եւ կարողութիւնը՝ Սուրիոյ հետ սահմանամերձ շրջաններուն վրայ լիբանանեան պետութեան գերիշխանութիւնը պարտադրելու:

Ռամպլինկ ընդգծեց, որ Բրիտանիա կը շարունակէ նեցուկ կանգնիլ Լիբանանի ընկերային, տնտեսական, ուսումնական եւ մարդկային ծրագիրներուն, ինչպէս նաեւ կը շարունակէ օժանդակել լիբանանեան բանակին եւ ապահովական կառոյցներուն: Ան հաստատեց, որ լիբանանեան բանակը կը մնայ Լիբանանը պաշտպանող օրինական միակ հաստատութիւնը՝ աւելցնելով, որ Բրիտանիա կը հպարտանայ լիբանանեան բանակին հետ իր ունեցած յարաբերութեամբ եւ կը ջանայ աւելի եւս ամրապնդել այդ յարաբերութիւնը:

ՎԱՐՉԱՊԵՏ ՀԱՐԻՐԻ ՔՈՒՊԻՉԻ ՀԵՏ ՔՆՆԱՐԿԵՑ ՇԱՐՔ ՄԸ ՀԱՐՑԵՐ

Վարչապետ Սաատ Յարիրի երեկ վարչապետարանին մեջ ընդունեց Լիբանանի մեջ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի անձնակազմի ներկայացուցիչ Իան Քուպիչը, որուն հետ քննարկեց լիբանանեան եւ շրջանային իրադարձութիւնները:

Միւս կողմէ, նախանցեալ օր Յարիրի նախագահեց Մուսթաքպալ պլոքի նիստին՝ ներկայութեամբ պլոքի նախագահ, երեսփոխան Պահիա Յարիրիի:

Նիստին ընթացքին քննարկուեցան լիբանանեան իրադարձութիւնները, յատկապէս Քապըր Շմունի միջադէպը եւ անոր լուծումը ապահովելու անհրաժեշտութիւնը:

Մուսթաքպալ պլոքը հաստատեց, որ նախարարաց խորհուրդը լաւագոյն վայրն է ազգային երկխոսութիւնը շարունակելու:

Պլոքը կոչ ուղղեց նաեւ կառչած մնալու Լիբանանի որդեգրած այն կեցուածքին, որ կը թելադրէ շրջանային տագնապներէն ինքզինք գերել կացուցել: «Լիբանան արտաքին կամ



շրջանային ոչ մէկ առանցքի մաս պիտի կազմէ», շեշտեց Մուսթաքպալ պլոքը:

ՓԱՂԱՆԳԱՒՈՐ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆԸ ԿՈՉ Կ'ՈՒՂՂԷ ԿԱԶՄԵԼՈՒ ՆՈՐ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆ ՄԸ ԵՒ ԿԱԶՄԱԿԵՐՊԵԼՈՒ ԿԱՆԽԱՀԱՍ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ



Փաղանգաւոր կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Սամի ժեմայէլ երեկ նախագահեց կուսակցութեան կեդրոնական խորհուրդի ընթացիկ նիստին, որ տեղի ունեցաւ Սայֆիի մէջ:

Նիստին ընթացքին քննարկուեցան Լիբանանի ներկայ իրավիճակը, ինչպէս նաեւ երկրին քաղաքական իրադարձութիւններն ու տիրող ընդհանուր կացութիւնը:

Նիստէն ետք Փաղանգաւոր կուսակցութեան

կեդրոնական խորհուրդը հրապարակեց հաղորդագրութիւն մը, որուն մէջ նշուեցաւ, որ երկրին դիմագրաւած հարցերը կարելի պիտի ըլլայ լուծել վերադառնալով լիբանանեան պետութեան:

Կուսակցութիւնը կոչ ուղղեց Յրգապալային անջատուելու շրջանային առանցքներէն եւ միջազգային բախումներու չերթալու, այլ՝ կառչած մնալու «Պապայայի յայտարարութեան», ինչպէս նաեւ

ինքզինք զանց կացուցելու քաղաքականութեան:

Հաղորդագրութեան մէջ նշուեցաւ, որ կառավարութեան աշխատանքներու կասեցումը արդէն իսկ մուտք գործած է երրորդ շաբաթը՝ կոչ ուղղելով կազմելու նոր կառավարութիւն մը եւ կազմակերպելու կանխահաս երեսփոխանական ընտրութիւններ, որուն հիման վրայ լիբանանցիները հաշուետուութեան պիտի կանգնեն իրենց ներկայացուցիչները:

ԽԱՄԵՆԷԻ. «ԲՐԻՏԱՆԻՈՅ ԾՈՎԱՀԷՆՈՒԹԻՒՆԸ ...»

Շարունակուած Ա. Էջէն

պետութիւններուն մեծագոյն խնդիրը մեծամարտեան ոգին է, եւ եթէ անոնց դիմաց տկար պետութիւն մը ըլլայ, անոնք այդ բնութեան պիտի դիմեն, սակայն եթէ անոնք դիմաց անոնց իրականութիւնը գիտցող եւ դէմը կանգնող ուժեղ պետութիւն մը ըլլայ՝ անոնք կը պարտուին»:

Արդարաւանաբար լիբանանական ծովու-ծին կողմէ իրանեան քարիւղատար նաւուն արգելանքի տակ առնուելու դէպքին՝ Իրանի գերագոյն հոգեւոր պետը յայտնեց. «Նենգ Բրիտանիան ծովահենութիւն կ'ընէ եւ մեր նաւերը կը գողնայ ու ոճիր կը գոր-

ծէ, ապա այդ արարքը օրինականութեան գոյնով կը ներկէ: Բրիտանիոյ նենգ ծովահենութիւնը անպատասխան պիտի չմնայ»:

«Իրան պիտի շարունակէ հիւլէական համաձայնագիրին նկատմամբ իր յանձնառութիւնները կրճատել: Ան հիւլէական համաձայնագիրին մէջ իր բոլոր յանձնառութիւնները կատարած է, իսկ երդպագիւնները համաձայնագիրէն 11 յանձնառութիւններ ոտնահարեցին... Մենք եւրոպական ու ամերիկեան ճնշումներուն առջեւ պիտի չտկարանանք», ըսաւ համաձայն:

ՀՈՐՄՈՒՋԻ ՆԵՂՈՒՑԻՆ ՄԷՁ . . .

Շարունակուած Ա. Էջէն

«Սի.Էն.Էն.»՝ յղում կատարելով ամերիկեան հետախուզութենէն իր աղբիւրներուն, հաղորդեց, որ Արաբական Միացեալ Էմիրութիւններուն պատկանող քարիւղատար նաւը, ենթադրաբար, գրաւուած է իրանցի զինուորներու կողմէ:

Լրագրող Պարպարա Սթարի տուեալներով՝ նաւը

բարձրացուցած է Փանամայի դոշը, իսկ Իրանի Յեղափոխական պահակազունի նաւերը բռնի ուժով նաւուն անձնակազմին ստիպած են փոխել ուղղութիւնը եւ մուտք գործել Իրանի ջրային տարածք:

Դեպքը տեղի ունեցած է շաբաթավերջին: Արաբական Միացեալ Էմիրութիւններու կողմէ արձագանգ

տակաւին չէ եղած:

«Եւրոպայի փրէս» կը հաղորդէ, որ խօսքը կը վերաբերի 58 մետր երկարութեամբ «Ռիպ» քարիւղատար նաւուն:

Անկի ուշ Իրան յայտարարեց, թէ օգնած է օտար քարիւղատար նորոգութեան կարիք ունեցող խանգարուած նաւու մը:

Ա. ԿԻՏԱՆԵԱՆ. «ԼԻԲԱՆԱՆԻ ՄԷՁ 2019-Ն ՁԲՕՍԱՇՐՋՈՒԹԵԱՆ ԼԱՒԱԳՈՅՆ ՏԱՐԻՆ Է՝ ԲԱՂԴԱՏԱԾ ՆԱԽՈՐԴ 7 ՏԱՐԻՆԵՐՈՒՆ»



Ձբօսաշրջութեան նախարար Անտիս Կիտանեան հարցազրոյցի մը ընթացքին հաստատեց, որ Լիբանանի մէջ 2019-ն զբօսաշրջութեան լաւագոյն տարին է՝ բաղդատած նախորդ 7 տարիներուն:

Ան նշեց, որ մրցակցութիւնը տակաւին 2010-ին ապահովուած արդիւնքներուն հետ է՝ նկատի ունենալով, որ անկէկա եղած է զբօսաշրջութեան լաւագոյն տարին:

Նախարար Կիտանեան աւելցուց, որ երկրին մէջ կատարուած ամրագրումները՝ պանդկներու, վարձու ինքնաշարժներու եւ ճամբորդական գրասենեակներու մօտ ցոյց կու տան, որ այս մարզը առողջ է, եւ նուաճումներու հսկայ աճ մը կ'արձանագրուի:

Միւս կողմէ, զբօսաշրջութեան նախարարութեան հովանաւորութեամբ Համմանայի քաղաքապետութիւնը յայտարարեց Համմանայի փառատօնին մեկնարկը:

Այս առիթով միացեալ մամուլի ասուլիսի մը ընթացքին Ա. Կիտանեան ողջունեց Համմանայի քաղաքապետ Ֆատի Սալիպիի ջանքերը եւ աշխուժութիւնը՝ Համմանան զետեղելու Լիբանանի զբօսաշրջութեան քարտէսին վրայ:

Նախարար Կիտանեան անդրադարձաւ Համմանայի մէջ իր ունեցած մակերեսային քաղող յուշերուն՝ հաստատելով, որ ինք խանդավառ է կազմակերպուած փառատօնով եւ 27 յուլիս 2019-ին անձամբ ներկայ պիտի գտնուի այդ փառատօնին:

Ա. Կիտանեան նշեց, որ նախարարութիւնը իր բոլոր կարողութիւնները ի սպաս կը դնէ Համմանայի քաղաքապետութեան եւ անոր փառատօնի կազմակերպումին:

ԱՊԻ ԽԱԼԻԼ «ՈՒՅՅԻ ՊԱՏՐԻԱՐՔԸ ՅԱՆՁՆԱՌՈՒ Է ԼԵՈՆԱԼԻԲԱՆԱՆԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԵԱՆ ՎԵՐԱՀԱՍՏԱՏՈՒՄԻՆ»

Մարունի համայնքի Պշարա Ռայի պատրիարքը երեկ Տիմանի մէջ ընդունեց երեսփոխան Սեզար Ապի Խալիլը, որուն հետ քննարկեց լիբանանեան իրադարձութիւնները, պետական ամավարկի քննարկումն ու Լեռնալիբանանի վերջին իրադարձութիւնները:



Ապի Խալիլ հաստատեց, որ Ռայի պատրիարքը յանձնառու է Լեռնալիբանանի ապահովութեան վերափառատումին:

Ան նշեց, որ Ռայի պատրիարքին ներկայացուցած է Ազգային ազատ հոսանք կուսակցութեան աշխատանքները եւ կուսակցութեան ղեկավար, երեսփոխան Ժապիաթ ճիգերը՝ ընդգծելով, որ անոնք կը նպատակադրեն լիբանանեան ընկերութեան բոլոր շերտերուն հետ գործակցութիւն եւ խորհրդակցութիւն ապահովել:

Ապա Խալիլ շեշտեց, որ Ռայի պատրիարքը ըմբռնուած ցուցաբերած է Լիբանանի կառավարութեան մէջ Հզօր Լիբանան համախմբումին ունեցած ներդրումին իմաստով եւ զօրակցութիւն յայտնած անոր:

Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻ ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Ուրախութեամբ կը յայտարարենք Պոլսիայի եւ Սրուժի մեր ազգայիններուն, որ կիրակի, 21 յուլիս 2019-ին, սուրբ եւ անմահ պատարագ պիտի մատուցուի Պոլսիայի Մաունթ Եկեղեցու մէջ:

Երգեցողութիւնը պիտի կատարէ Ս. Նշան մայր Եկեղեցու դպրաց դասը:

Պիտի նախագահի եւ քարոզէ՝ ԳԵՐՊ. Տ. ԱՆԱՆԻԱ Տ. ՎՐԴ. ԳՈՒՃԱՆԱՆ Սկիզբ Ս. պատարագի՝ ժամը 11:00-ին:

Ջրօրինեք՝ ժամը 12:30-ին:

Սիրով կը իրաւորենք հաւատացեալ ժողովուրդը՝ ներկայ գտնուելու եւ մասնակցելու օրուն սուրբ խորհուրդին:

Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԹԱՂԱԿԱՆՈՒԹԻՒՆ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ «ՎԷՄ»-Ի 2019-Ի 2-ՐԴ ԹԻԻԸ

Լոյս տեսած է «ՎԷՄ» համահայկական հանդէսի 2019 թուականի 2-րդ թիւը՝ 350 էջ ծաւալով Եւ հարուստ բովանդակութեամբ։

Խմբագրականին մէջ փորձ կատարուած է համակողմանի քննութեան ենթարկել վերջին մէկ տարուան ընթացքին հայ քաղաքական մտքի համար կրկին առաջնահերթ դարձած Յայաստանի քաղաքական արեւելումներու հարցը, որուն ռազմավարական տեսանկիւններու բացայայտումը թոյլ կու տայ լուսարծակի տակ առնել այս լուրջ խնդիրի ներքաղաքական շահարկումներու ողջ պարզունակութիւնը։

«ՎԷՄ» հանդէսը 2019 թուականի 2-րդ թիւով կը սկսի 2019 մայիս 24-ին 33 հաշնակցութեան եւ Յայաստանի Հանրապետութեան Գիտութիւններու ազգային ակադեմիայի Պատմութեան հիմնարկի համատեղ ջանքերով կազմակերպուած՝ «Միացեալ Յայաստանի անկախութեան 1919 մայիսի 28-ի աքթը. պատմութիւն եւ արդիականութիւն» գիտաժողովի նիւթերու հրապարակումը։ Որոնց շարքին առաջինը Արարատ Մ. Յակոբեանի «Միացեալ Յայաստանի անկախութեան աքթը։ Ընդունման 100-ամեակի առթիւ» ուսումնասիրութիւնն է, որուն ընդարձակ տարբերակը շուտով լոյս կը տեսնէ Լաւե առանձին գրքոյկով։ Այդ գիտաժողովին կարդաց-

ուած միւս գեկոյցները կը հրապարակուին «ՎԷՄ»-ի յաջորդ թիւով։

Հանդէսի 2019 թուականի 2-րդ թիւը հարուստ է երիտասարդ ու խոստմնալից ուսումնասիրողներու թարմ ու հետաքրքրական հրապարակումներով, որոնցմէ կարելի է մատնանշել Էդիտա Գ. Գզոյեանի իրականացուցած՝ Մատակասկարում հայկական գաղութ ստեղծելու՝ 1925-1926 թուականներուն ծրագրի – 1940-ական թուականներուն հիթլերեան Գերմանիոյ կողմէ հրեական հարցի «լուծման» համար նախատեսւած՝ «Մատակասկարեան նախագծի» համեմատական քննութիւնը։

Երիտասարդ գիտնականներ Նարեկ Ա. Մկրտչեանի եւ Գեորգ Ա. Ճաղարեանի ջանքերով գիտական շրջանառութեան մէջ դրուած է Ազրայէ՝ ճանի մէջ 1980-ականներու վերջերը-1990-ականներու սկիզբը տեղի ունեցած հայկական ջարդերու դատապարտման նուիրուած արժէքաւոր փաստաթղթի մը, որ 1990 յուլիս

27-ին «ՆԽ Եորը Թայմզ»-ի էջերուն մէջ հրապարակած են մարդասիրական գիտութիւններու բնագաւառին մէջ համաշխարհային հռչակ ունեցող գիտնականներ **Հանս-Գեորգ Կատսմերը, Ետրկին Հապերմաւսը, Ժաք Տերիտան, Ժան-Ֆրանսուա Լիոթարը, Էմանուէ Լեւինասը եւ**

ուրիշներ։ Հետագային այս գիտնականներէն բազմաթիւ յղումներ կատարուած են մեր հարեան Ազրայէճանի մէջ՝ մոռնալով 1990-ին «ՆԽ Եորը Թայմզ»-ի մէջ լոյս տեսած՝ «Բաց նամակ առ միջազգային հակրութեան կարծիքը հորիրդային Միութիւնում հակահայկական ջարդի վերաբերեալ» փաստաթուղթի մասին։ Հայ ժողովուրդին ուղղուած աջակցութեան այս աննախադէպ քայլը անուշադրութեան մատնուած է Լաւե մեր քարոզչութեան ու դիւանագիտութեան կողմէ։

Ուշագրաւ է նաեւ մէկ այլ երիտասարդ գիտնականի՝ Նարինէ Մ. Նուշերվանեանի ուսումնասիրութիւնը՝ Յայաստանի Ա. Հանրապետութեան շրջանին ծնուող առած՝ «հայրենիքի տուրքի» մասին, որ ըլլալով մինչ այդ արեւմտահայ իրականութեան մէջ տարածուծ գտած՝ «ազգային տուրք» հասկացողութեան նորացուած եւ պետականութեան պայմաններուն յարմարեցուած տարբերակը՝ խիստ արդիական է Լաւե մեր օրերուն։

«ՎԷՄ»-ի 2019 թուականի 2-րդ թիւին մէջ տեղ գտած են Լաւե հանդէսի ընթերցողներուն արդէն քաջածանօթ աւագ սերունդի գիտնականներու ուսումնասիրութիւններն ու հրապարակումները։

ԽՄԱՔԳՐԱԿԱՆ «ՎԷՄ»-Ի

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԵՒԵԼՈՒՄԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ*

Մեր հին աղաթից ընկել ենք, գգրկուել, Նորն էլ չըգիտնք թէ ինչ է եկել (1): Յովհաննէս Թումանեան

Հայոց քաղաքական կողմնորոշումների (արեւելւումների) մասին մեր հին պատկերացումները վերջին մէկ տարուայ ընթացքում բախուել են Յայաստանի նոր իրողութիւններին, եւ չկարողանալով բացատրել դրանց իմաստն ու բովանդակութիւնը՝ լիովին կորցրել են երկրի ներսում ու նրա շուրջը տեղի ունեցող տեղաշարժերն ըմբռնելու ու բացատրելու ճանաչողական գործառոյթները։

Այս տխուր փաստը հանրային մակարդակի վրայ դրսեւորւում է մեզանում գրեթէ ամէն օր արտաբերուող՝ թումանեանական «Հառաչանքի» խօսքերի միջոցով, իսկ փորձագիտական շրջանակներում ընդունել է հետեւեալ երկանում գլուխկոտրուկի տեսքը.

1. 2018-ի գարնանը տեղի ունեցած «Թաւշեայ յեղափոխութիւնից» յետոյ Յայաստանի նոր իշխանութիւնները փոխել են մեր երկրի արտաքին քաղաքական կողմնորոշումը, բայց որդեգրելով դաւադիր կեցուածքներ՝ յամառօրէն զգուշանում են արտայայտուել այդ մասին՝ շարունակելով սիրաշահել մեր աւանդական գործընկեր Ռուսաստանի ղեկավարութեանը։

2. Անցած մէկ տարուայ ընթացքում մեր երկրի արտաքին քաղաքականութեան սապարեզում տեղի ունեցած տարօրինակ փոխակերպումները Յայաստանի քաղաքական կողմնորոշման փոփոխութեան արտայայտութիւնը չեն, այլ սոսկ նոր իշխանութիւնների անփորձութեան ու արիեստավարժութեան բացակայութեան հետեւանքը։

Սրանից ստացւում է, որ մենք գործ ունենք կա՛մ յանցաւոր դաւադրութեան, կա՛մ էլ անուղղելի տգիտութեան հետ, որն արտաքին քաղաքականութեան սապարեզում ոչ պակաս վտանգաւոր է, քան առաջինը։ Մինչդեռ ուշադիր քննելով այս երկանում գլուխկոտրուկը՝ դժուար չէ նկատել, որ նրանում առկայ հաստատական ու ժխտական հարցադրումները կտրուելով դիտարկման բուն առարկայից՝ Յայաստանից, վերածուել են **հիմնային սխալի** (2)։

Իսկ առարկայական իրողութիւնն այն է, որ 2018-ին Յայաստանում տեղի ունեցած իշխանափոխութեան արդիւնքում ո՛չ մեր երկրի արտաքին քաղաքականութիւնն է լուրջ փոփոխութիւններ կրել եւ ո՛չ էլ այն սպասարկող արիեստավարժ դիւանագիտական **կորպուսը**։ Փոփոխութիւնը տեղի է ունեցել նրան ուղղութիւն տուող քաղաքական ընտրանու ձեւաւորման աշխատակարգերի եւ գործելակերպի մէջ։ Ան այդ՝ Յայաստանի իշխանութեան առաջին դէմքերի կողմից՝ 1991 թուականից յետոյ էլ Մոսկուայի հետ համաձայնեցուող՝ ժառանգորդի նշանակման իրողութեանը 2018-ին փոխարինել է ժողովրդի կողմից սեփական իշխանութեան ձեւաւորման փաստը։ Այսինքն՝ որքան էլ տարօրինակ է՝ «Հանրապետական» կոչուող կուսակցութեան իշխանութեան տապալումը յանգեցրել է ազգի գերիշխանութեան սկզբունքը մարմնաւորող **հանրապետական վարչակարգի** հաստատմանը։

Երկրի քաղաքականութիւնը ձեւաւորող խորքային սուբյեկտի փոփո-

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ «ՎԷՄ»-Ի

ԽՄԱՔԳՐԱԿԱՆ ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԵՒԵԼՈՒՄԻ ՎԵՐԱԾՆՈՒՆԴԸ ՀԻՄՆԱՔԱՐԵՐ - Գեորգ Գ. Յակոբեան	
ՂԵՄՈՎՐԱՏԻԱՅԻ ՓԻԼԻՍՈՓԱՅԱԿԱՆ ԸՆՆԱՐԱՏՈՒԹԻՒՆ Ռեժո հիմնախնդիրներ եւ դրանց հնարաւոր լուծումները	
ՊԱՏՈՒԹԻՒՆ Արարատ Մ. Յակոբեան ՄԻԱՅԵԱԼ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՆՈՒԹԵԱՆ <i>ԱՔԹԸ</i> Ընդունման 100-ամեակի առթիւ	
ԳՐԱԿԱՆԱԳԻՏՈՒԹԻՒՆ Աստղիկ Վ. Սողոյեան ԽԱՉԱԵԱՐԻ ԱՐՈՎԵԱՆԻ «ԱՂԱՍՈՒ ԽԱՐԸ» ԸՆԱՐԱՊԱՏՈՐԱԿԱՆ ՊԻԷՒԻ ԵՆԴԻՈՍՈՒՅԻՆ ԲՆՈՅԹԸ Սուրեն Դ. Դանիլեան ԴԵՒԻ «ԱՍԲՈՐՁԱԿԱՆ» ՕԵԱԿԱՆ Մատենագիտութիւնը որպէս ուղիղ ճանապարհ	
ԼԵՃՈՒԲԱՆՈՒԹԻՒՆ Վարդան Զ. Պետրոսեան ՀՊԱԿԱՆ ԲԱՂԱՋԱՅՆՆԵՐԻ ՀՆԴԵՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ Վարկաձային վերականգնման փորձ Դաւիթ Ս. Գիւրջինեան	
ԱՐՏԱԳԱՐԹԻ ԵՄ ՍՓՈՄԱՆ ՊԱՏՈՒԹԻՒՆ Հայրենի «արաբական երկրների հայ» բառաիմաստային խումբը	
ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹԻՒՆ Նանե Մ. Սովսիսեան ՊԱՏՈՒԹԻՒՆ ՎԵՐԱՄԱՍՏԱՆՈՐՄԱՆ ԱՌԱՋԱՅԱՑԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ Հայոց ինքնութեան լուսաւորական յարացոյցում	
ՀԱՆԳԻՏՈՒԹԻՒՆ Արսէն Է. Յարութիւնեան ՄԻԱՎԱՆԻ Ն. ԱՂՈՒՑԻ ԱՆՈՒՄԻ ՊԱՏՈՒԹԵԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԱՐՁԱՆԳԻ ԱՌԳՈՒՄԱԿԱՆԵՐԸ	
ՄԵԿԱՈՅԹ Արման Ա. Մակարեան «ԹԱՏՐՈՆ. ԲԱՐԵԿԱՄ ՄԱՆԿԱՆՅ» ՊԱՐԲԵՐԱԿԱՆՈՒՄ ՀՐԱՏԱՐԱԿ	

ԻԱՃ ՆԿԱՐՆԵՐԻ ԳԵԼԴԵՐԱՅԻՆ ՀԵՆԸԸ

ՅԻՇՈՂՈՒԹԻՒՆ

Էդիտա Գ. Գզոյեան
ՄԱՏԱԿԱՄԿԱՐՈՒՄ ՀԱՅԿԱԿԱՆ ԳԱՂՈԹ ՍՏԵՂԾԵԼՈՒ 1925-1926 ԹԹ. ԾՐԱԳԻՐԸ
Եւ հրեական հարցի լուծման 1940-ական թթ. «Մատակասկարեան նախագիծը». համեմատական քննութիւն

ԸՆՆԱՐԿՈՒՄԵՐ

Արտուր Մ. Սարգսեան

ԱՍՈՐԵՍԱՆԻ ԱՐՁԱՅ ԹՈՒԿՈՒԹ-ՆԻՆՈՐՄԱ I-ի (Բ.Ա.1243-1207 Թթ.) ԱՐՇԱՄԱՔԸ ԿՈՒՏԻ, ՇՈՐԱՐԻ ԵՄ ՆԱՅԻՐԻ

ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ

Նարեկ Ա. Մկրտչեան

Գեորգ Ա. Ճաղարեան

ԱՇԽԱՐՀԱՅՈՒՄԻ ԳԻՏԱԿԱՆՆԵՐԻ ԱՆՆԱԽԱՂԵՂ ԱՐՁԱԳԱՆԳԸ

Ազրայէճանում 1980-ականների վերջերին-1990-ականների սկզբներին տեղի ունեցած հայկական ջարդերին

ԼՐԱՏՈՒ

Մարիետա Ա. Թելուց

ՀԱՄԱՏԵՂ ԳԻՏԱԺՈՂՈՎ

«Միացեալ Յայաստանի անկախութեան 1919 թ. մայիսի 28-ի *աքթը*. պատմութիւն եւ արդիականութիւն» թեմայով

ԳՐԱԽՕՈՒԹԻՒՆՆԵՐ

Սուրեն Մ. Աբրահամեան - Հենրիկ Էդոյեան, լոյսը ձայն կողմից

ԱՐԽԻՒ

Ռուբեն Օ. Սահակեան

ԹՈՎԱՄԱ ՆԱՃԱՐԲԵԿԵԱՆԻ ԱՏԻՊԻ ՅՈՒՇԵՐԸ

Ռազմական գործողութիւնները Կովկասեան ճակատում 1914 թ. յուլիսից մինչեւ 1916 թ. ապրիլի 26-ը

Տետր 2: 1915 թ. յունուարի 1-ից մինչեւ 1915 թ. մայիսի 12-ը

ՅԱՒԵԼՈՒՄՏ

Նարինէ Մ. Նուշերուանեան

«ՀԱՅՅԵԼԻԹԻ ՏՈՐԹԻ» ԳԱՂԱՓԱՐԻ ԾԱԳՈՒՐԸ

Եւ նրա գործերումն փորձերը Առաջին Հանրապետութեան շրջանում

ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ Մ. ԵՒ Հ. ԱՐՍԼԱՆԵԱՆ ԴԵՄԱՐԱՆ

ԺԲ. ԱՒԱՐՏԱԿԱՆ ԴԱՍԱՐԱՆԻ ՎԿԱՅԱԿԱՆՆԵՐՈՒ ԲԱՇԽՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ

Հինգշաբթի, 4 յուլիս 2019-ի երեկոյեան ժամը 7:00-ին Համազգայինի Մ. Եւ Հ. Արսլանեան Ծննդարանի «Տոքթ. Ատրիսէ Գարազեան» մարզամշակութային սրահին մէջ տեղի ունեցաւ ԺԲ. աւարտական դասարանի վկայականներու բաշխման հանդիսութիւնը, ներկայութեամբ՝ Լիբանանի հայոց թեմի առաջնորդ Նարեկ արքեպիսկոպոսի ներկայացուցիչ Նարեկ Աւագ քնյ. Յեմինեանի, Հայկական երեսփոխանաան պլոքի անդամ, երեսփոխան Յակոբ Թերզեանի, քաղաքական կուսակցութիւններու, մարմիններու եւ միութիւններու ներկայացուցիչներու, հայկական վարժարաններու տնօրէններու, Ծննդարանի ծնողներուն, շրջանաւարտներուն, դպրոցի բարեկամներուն, անձնակազմին, տնօրէնութեան, խնամակալութեան ու Համազգայինի Կեդրոնական վարչութեան:

Լիբանանի եւ Հայաստանի բայլերգներու ունկնդրութենէն ետք հանդէպ սկսաւ աւարտական դասարանի աշակերտներուն մանկապարտեզի հանդէսին, ապա 2018-2019 տարեշրջանի նկարներուն ցուցադրութեամբ, որուն յաջորդեց շրջանաւարտներուն հանդիսաւոր մուտքը սրահ:

ԺԱ. դասարանին կողմէ Ռուբէն Խաչատուրեան ողերթի ուղերձով անդրադարձաւ աւարտական դասարանի աշակերտներուն հետ իրենց ապրած յիշատակելի օրերուն, ապա յաջողութիւն եւ բարի երթ մաղթեց անոնց: Այնուհետեւ յայտագիրը ընթացաւ շրջանաւարտներուն հրաժեշտի խօսքերուն եւ գերարուեստական բաժինի համադրական ներկայացումով: Մնաս բարովի իրենց խօսքերէն կարողացին՝ Կալի Միսիրեան, Նարոտ Մերտիսեան, Լեա Խաչատուրեան, Լեւոն Գալպանեան, Վանայ Պաքալեան եւ Նարեկ Մերտիսեան: Կայլէ Գրիգորեան բանտով, Նարեկ Մերտիսեան կիթառով եւ Կարօ Գրիգորեան դաշնամուրով նուագեցին կոմիտասեան երգերու շարք մը, ապա Շարլ Ազնաւուրի «Լա պոնը»՝ Վագօ Հաշեօլեան սրինգով եւ Կարօ Գրիգորեան դաշնամուրով: Նուագներուն յաջորդեց Ժ. եւ ԺԱ. դասարաններու աշակերտներուն վրացական պարը, որմէ ետք աւարտական դասարանէն խուր մը աշակերտներ սամուկնքեցին Պարոյր Սեւակի «Անլուի գանգալատուն»-էն «Ղօղանջ թաղման եւ յարութեան»:

Գեղարուեստական յայտագիրէն ետք Ծննդարանի տնօրէն Փաուլա Եղիայեան բեմ բարձրացաւ մրցանակաբաշխութեան համար: Կալի Միսիրեան եւ Լեա Խաչատուրեան արժանացան աւարտական դասարանի բարձրագոյն միջին ապահովողի «Մարջ Արտաշէան» եւ աւարտական դասարանի ուսողութեան լաւագոյն միջին ապահովողի «Չաւէն Գուլումճեան» մրցանակներուն: Աւարտական դասարաններու գիտական Նիւթերու բարձրագոյն միջին ապահովողի «Կարօ Գալանեան» մրցանակը ստացաւ Կալի Միսիրեան: Աւարտական դասարաններու մէջ հայերէնագիտական լաւագոյն միջին ապահովողի «Սօսի յիշատակի ֆոնտ»-ի մրցանակներուն արժանացան գրական բաժինէն՝ Պեթի Փաշանեան, իսկ գիտական բաժինէն՝ Կալի Միսիրեան: Գերագանց արդիւնքներ ապահովող ու միաժամանակ հասարակական գործունէութիւն ունեցողի «Արշալիր Յովսէփեան» մրցանակները ստացան գրական բաժինէն՝ Վանայ Պաքալեան եւ Մարի-Քրիսթել Աճմեան, գիտական բաժինէն՝ Նարեկ Մերտիսեան եւ Նարոտ Մերտիսեան: «Ջահակիր»-ի պատրաստութեան լաւագոյն մասնակցութեան «Վիզէն Չաքարեան» մրցանակին արժանացան Մարի-Քրիսթել Աճմեան եւ Նարոտ Մերտիսեան: Երկրորդական դասարաններու մէջ հայերէնագիտական Նիւթերու բարձրագոյն միջին ապահովողի Համազգայինի Կեդրոնական վարչութեան կողմէ տրամադրուած Ֆորումի մասնակցութեան մրցանակին արժանացան Կալի Միսիրեան եւ Նարոտ Մերտիսեան: Թ. դասարանի արաբերէնի լաւագոյն միջին ապահովողի «Սօսէ Սեփեճեան» մրցանակը ստացաւ Վանայ-Նարեկ Մանուկեան: Է. դասարանի ֆրանսերէնի լաւագոյն արդիւնք ապահովողի «Արտա Պեթրճեան» մրցանակին արժանացաւ Լոռի Միսեան: Նախակրթարանի մէջ հայերէնագիտական Նիւթերու լաւագոյն արդիւնք ապահովողի «Սօսի Մարիսաքալեան» մրցանակը ստացաւ Շուրիան Թրթրեան: Տիպար մարզիկի եւ տիպար մարզիկուհիի «Գորդգէս եւ Լուսին Ճատուրեան» մրցանակները ստացան Հրակ Թորոսեան եւ Էնճըլա Պուճիքեան: ԺԲ. դասարանի ծառայաւոր ու խանդավառ աշակերտի «Վիզէն Աղասարգիսեան» մրցանակին արժանացաւ Հրանդ Գալեմբերեան:

Մրցանակաբաշխութենէն ետք Փաուլա Եղիայեան արտասանեց տնօրէնութեան խօսքը, որուն մէջ անդրադարձաւ այն երեւոյթին, որ այս տարի համայն հայուկիւնը կը Նշէ Կոմիտաս վարդապետին, Ամենայն Հայոց բանաստեղծ Յովհաննէս Թումանեանին եւ Համազ-



գային Հայ կրթական եւ մշակութային միութեան եւ հայ կրթութեան Ջահակիր Հայ Ծննդարանի հիմնադիրներէն Լեւոն Շանթին ծննդեան 150-ամեակը՝ Նշելով, որ կոմիտասեան «Կաքաւիկ»-ի եւ «Կռունկ»-ի երաժշտութեամբ հասակ առած, Թումանեանի «Կաթիլ մը մեղր»-ով սնած եւ Շանթի մանկավարժական սկզբունքներով դաստիարակւած Ծննդարանաւարտներու մեծ ընտանիքին այսօր կը միանան 30 նոր շրջանաւարտներ:

«Երիտասարդուհիներ եւ երիտասարդներ, որոնք, թէեւ այսօր ֆիզիքապէս կը բաժնուին իրենց դպրոցէն, սակայն վստահ ենք, որ իրենց հոգիներուն մէջ պիտի պահեն Ծննդարանի յատուկ հայաբոյր ու մտերմիկ մթնոլորտը. պիտի առաջնորդուին Ծննդարանական ոգիով եւ ամուր կառնած պիտի մնան այն բոլոր սկզբունքներուն, որոնք հիման վրայ կազմաւորուեցան ու ծաղկեցան»: Ապա ան ներկայացուց փակուող տարեշրջանին Ծննդարանի դպրոցական եւ արտադպրոցական աշխատանքները, աշակերտներուն իրագործումներն ու արձանագրած յաջողութիւնները, որոնք կարգին՝ յաջողու-



թիւնը պըրզլի պետական քննութիւններուն ներկայացած 25 աշակերտներէն 24-ին, որոնցմէ 9-ը արժանացած են յիշատակութիւններու, իսկ աւարտական դասարանի Ֆրանսերէնի պարբերական քննութիւններուն ներկայացած 30 աշակերտներուն ամբողջական յաջողութիւնն ու 30-էն 20-ին յիշատակութիւններու ստանալը: Իր խօսքին մէջ ան յատուկ տեղ տուաւ այս տարեշրջանին սկիզբը ծնունդ առած «Բաֆֆի եւ Անելկա Արսլանեան» մանկամարտին, որ այսօր կ'ընդունի 3 ամսականէն 3 տարեկան 74 երեխաներ, որոնք կը վայելեն իրենց դաստիարակներուն գուրգուրանքն ու հոգատարութիւնը:

Փաուլա Եղիայեան նաեւ անդրադարձաւ Ծննդարանի դիմագրաւած նոր մարտահրաւերներուն: «2019-2020 տարեշրջանին Ծննդարանի երկրորդական բաժնի աշակերտները պիտի սկսին հետեւելու Ֆրանսական պաքալորէայի վերանայուած նոր ծրագիրին, որ իր այլազանութեամբ ու նորութիւններով վստահաբար նորանոր յաջողութիւններ պիտի ընծայէ մեր աշակերտներուն: Ինչ կը վերաբերի մեզ բոլոր յուզող լիբանանեան իրականութեան տնտեսական այս դժուար պայմաններուն, մենք յաճախ կը գտնուինք նիւթական նեղ կացութիւններու առջեւ: Այս առիթով շնորհակալութիւն կը յայտնեմ Նախ Համազգայինի Կեդրոնական վարչութեան, եւ ապա՝ Ծննդարանի ծնողներուն ու բարեկամներուն, որոնք իրենց բարոյական եւ նիւթական օժանդակութիւններով միշտ մեր կողքին են, որովհետեւ իր-

լոքս կը հաւատանք, որ 89 տարիներ առաջ հիմնուած այս կրթօճախը տակաւին շատ հայ երիտասարդներ պատրաստելու պատասխանատուութիւնը կը կրէ իր ուսերուն», ըսաւ տնօրէնը՝ շեշտելով, որ Ծննդարանը սոսկ դպրոցական հաստատութիւն մը չէ եղած. «Թէեւ այսօր չկան հայ մտքի ու մշակոյթի մեծանուն առաքեալներ Շանթն ու Աղբալեանը, սակայն կայ անոնց տեսլականը, կայ անոնց սկսած սրբազան գործը, կայ տնօրէնողներ կերտող դարբնոցը, կայ 89 տարեկան, բայց երիտասարդ ու նոր նուաճումներու վճռական տրամադրութեամբ ոգեւորուած կանգուն Ծննդարանը, որ նոյն վճռականութեամբ կը պատրաստուի 2019-2020 տարեշրջանին դիմաւորելու իր հիմնադրութեան 90-ամեակը: Կայ, կը գոյատեւէ ու կը բարգաւաճի Ծննդարանը՝ շնորհիւ հայ դպրոցին հաւատացող ու վստահող մեր ծնողներուն, ինչպէս նաեւ՝ շնորհիւ մեր աշակերտներուն ուղեկցող ու անոնց կազմաւորման համար շունչ ու եռանդ սպառող նուիրեալ ուսուցիչներուն. ձեր վարձքը կատար Ծննդարանի անձնակազմի անդամներ, ձեզմէ իւրաքանչիւր իր իւրայատուկ ներդրումը ունի Ծննդարանի յաջողութիւններուն մէջ», եզրափակեց ան:

Վկայականներու բաշխումէն առաջ Փաուլա Եղիայեան խօսքը ուղղեց շրջանաւարտներուն, շնորհաւորեց անոնց յաջողութիւնը, ծնողներուն եւ դաստիարակներուն կողմէ անոնց նկատմամբ ցուցաբերուած հոգատարութեան ու համբերութեան անդրադարձաւ եւ ըսաւ. «Սիրելի՛ շրջանաւարտներ, միշտ եղէք լայնախոհ, ինքնավըստի, շրջահայեաց ու պարկեշտ, միշտ մնացէք ազնիւ, անկեղծ, յարգալի ու արդարամիտ, սորվեցէ՛ք լեզուներ, գա՛րկ տուէ՛ք ձեր գիտելիքներուն ու կարողութիւններուն եւ ձգտեցէ՛ք միշտ լաւագոյնի»: Ընտրած մասնագիտութիւններուն ու ասպարեզներուն մէջ, բայց մասնաւոր եղէ՛ք տէրն ու պաշտպանը՝հայոց լեզուին, գրականութեան ու պատմութեան, հայ մշակոյթին ու ասանդութիւններուն, հայ դպրոցին ու Հատին- Խօսեցէ՛ք հայերէն, գրեցէ՛ք հայերէն եւ կազմե-



ցէ՛ք հայ ընտանիքներ, եւ վերջապէս, եղէ՛ք «Մեր բոլորին ուխտավայր Ծննդարանի» հպարտ շրջանաւարտներ ու մանաւանդ հպարտ հայեր: Բարի՛ երթ ու կանաչ ճանապարհ ձեր բոլորին»:

Իր խօսքէն ետք տնօրէնուհին բեմ հրաւիրեց Համազգայինի Կեդրոնական վարչութեան ատենապետ Սկրտիչ Սկրտիչեանը՝ մասնակցելու վկայականներու յանձնումին:

Շրջանաւարտի վկայականներ ստացան. Գրական ճիւղէ՛ն՝ Աճմեան Մարի-Քրիսթել, Պաքալեան Վանայ, Տեխնիկական ճիւղէն, հաշուեան Կալի, Քիւրքեթեան Նարեկ, Փաշանեան Պեթի, Չաքարեան Մեղրի, Չաքալեան Սեւակ, Գալեմբերեան Հրանդ, Թորոսեան Հրակ:

Գիտական ճիւղէ՛ն՝ Յակոբեան Փաթիլ, Աթաբեան Ռիթա, Պուճիքեան Էնճըլա, Տեր Խաչատուրեան Գալին, Խաչատուրեան Լեա, Մերտիսեան Նարոտ, Միսիրեան Կալի, Անետիս Արի, Տեքերմեճեան Անթոնի, Գալանեան Լեւոն, Գալեմբերեան Վարանդ, Գաթիլեան Արթուր-Անթոնի, Գարանեան Երուանդ, Հաշեօլեան Վարդգէս-Վարդգ, Գրիգորեան Կարօ, Մերտիսեան Նարեկ, Միքայելեան Սիմոն, Թաշճեան Կարօտ, Չաքրեան Վարդգ-Կայծ, Եսփունճեան Անետիս:

Վկայականներու բաշխումէն ետք հանդիսութիւնը փակուեցաւ Ծննդարանի բայլերգով, որմէ ետք ներկաները շնորհաւորեցին շրջանաւարտները, եւ տեղի ունեցաւ հիւրասիրութիւն:

ՀԱՅԿԱԿԱՆ ԱՐԵՒԵԼՈՒՄ...

Շարունակուած 4-րդ էջէն

Նման պայմաններում «փոքրիկ-չարածի» Հայաստանի կապանքների թուլացումն ու նրան համաքրիստոնեական ու համաերոպական ընդհանուր շահերի տարածաշրջանային սպասարկուի դերակատարութեան տրամադրումը վաղօրօք հաշուարկուած ու միանգամայն գիտակցուած քայլ է թուում:

Ամենեւին էլ չտառապելով «դաւադրութիւնների տեսութեամբ»՝ ոչ առանց հիմքի հակուած ենք պնդելու, որ ինչպէս ԽՍՀՄ-ի փլուզման դարաշրջանում, այնպէս էլ անցած մէկ տարուայ ընթացքում Հայաստանը վերածուել է Արեւմուտքի հետ յարաբերութիւններում Ռուսաստանի համար Նախընտրելի քաղաքակրթական բնորդի (մոտեցիլ) փորձարկման հարթակի: Ուստի, մեզանում ծաւալուող քաղաքական բեմականացումների մակերեւոյթին յայտնուած «սորոսեան տիպի» խայտաբղետ դերակատարների առկայութիւնն ամենեւին էլ չի կարող թողարկել այդ աւելի խորքային՝ քաղաքակրթական բնոյթ ունեցող գործընթացի սկզբնաւորումը, որի իրական նպատակները նոր են միայն բացայայտում: Նրա բարեյաջող ընթացքն արդէն տեսանելի ապագայում մեծ շահաբաժիններ է խոստանում մեր երկրին, որն իր ասանդական՝ «քաղաքակրթական թթխմորի» դերը խաղալու պարագայում կարող է ընդմիշտ իրաճշտ տալ դժուէս 19-րդ դարում հայոց քաղաքական արեւելումների բարդ թեմուկի խորքում ձեւաւորուած եւ շուրջ մէկ հարիւրամեակ Հայկական հարցը փակուող մտցրած Արեւմուտք-ռուսաստան ակումբելի հակադրութեանը (կողիզային):

Այլեւ անհնար է չնկատել 2018-ին Հայաստանում տեղի ունեցած իշխանափոխութեան խորքային կապը՝ շրջափոխների (ցիկլների) տեսքով դրսեւորուող՝ Ռուսաստանի արեւմտականացման պատմական անհրա-

ծեշտութեան հաստնացման նոր հանգրուանի հետ: Ուստի, Ռուսաստանի արժեքային կողմնորոշման գործընթացի սկզբնաւորման փաստը մեզ աստիճանաբար սկսել է ապահովել ոչ միայն մարտավարական զօրաշարժերի նոր հնարաւորութիւններով, այլեւ ընդհանուր շահերի նորացւած ընկալման վրայ հիմնուած՝ աշխարհայեացքային նոր մեկնակետով: Քաղաքակրթական նոր տարածքում ուրուագծուող այդ ընդհանուր շահերն են միայն, որ մեզ թոյլ են տալիս Հայաստանի արտաքին քաղաքականութեան ասպարեզում նորովի իմաստաւորել հայկական կողմնորոշման գաղափարը: Զանգի նման պայմաններում «Սառը պատերազմի» դարաշրջանին բնորոշ «կամ-կամ»-ի պարտադրանքին մեր սեփական հակազդեցութիւնը՝ «ո՛չ Արեւելք, ո՛չ Արեւմուտք» բանաձեւը, շրջում ու վերածում է «ե՛ւ Արեւելք, ե՛ւ Արեւմուտք» սկզբունքի՝ շեշտակի կերպով ընդլայնելով Հայաստանի արտաքին գործընկերների շրջանակը:

Պատճառն ակնյայտ է. ժամանակին հայկական կողմնորոշման գաղափարի առանցքում առկայ համայնքային-փակ կեցութեանը բնորոշ՝ պաշտպանական գործառնոյթ պետականութեան առկայութեան պայմաններում արդէն իսկ փոխակերպուել է հայկական քաղաքակրթութեան ի սկզբանէ բնորոշ՝ համադրական գործառնոյթ: Ուստի սեփական հողի վրայ այդ համադրութեան ու սիւնեզիի իրականացման առաջադրանքը կարող է ներդաշնակօրէն տեղաւորուել այն նոր քաղաքակրթական տարածքում, որն ուրուագծում է Ռուսաստանի արեւմտականացման պատմական անհրաժեշտութեան համաթեքստում: Դրանով պետականութեան կազմակերպուած հայկական քաղաքակրթութիւնը ներդաշնակ երկխօսութեան հնարաւորութիւն է ստանում Միացեալ Նահանգներում՝ իր սարդեանների ու արշիլկորքների, Եւրոպայում՝ ազ-

նաւորների ու միջէլեկրանների, Ռուսաստանում՝ այլազովսկիների ու վախթանգովների ձեւաւորած մշակութային ընդհանուր հենքի վրայ: Բայց այդ ամենը մեզ չի զրկում նաեւ Չինաստանի, իսլամական աշխարհի ու մանաւանդ՝ Իրանի հետ աւանդական կապերի խորացման հնարաւորութիւնից:

Ներկայումս կրուլալ մակարդակի վրայ աննկատ կերպով թափ հաւաքող՝ քաղաքակրթական նոր տարածքի ձեւաւորման անկասելի ընթացքը՝ մի կողմից եւ մեր հարեան Թուրքիայի՝ քաղաքակրթութիւնների կամուրջի վերածուելու փորձերի ձախողման ակնյայտ իրողութիւնը՝ միւս կողմից, մեր առջեւ ուրուագծում են ոչ միայն Պարսաղի հարցի արդարացի լուծման, այլեւ դէպի Արարատ դիմաշրջուելու եւ Հայկական հարցը վերաբացելու յուսատու ուղիները:

- (1).- Թումանեան Հ., Երկերի լիակատար ժողովածու, հատ. 3., Եր., ՀՅՍՄՈՒ ԳԱ հրատ» 1989, էջ 74:
- * Շնորհումով է տպագրութեան 1.06.2019:
- (2).- Հիմնային սխալ- error fundamentalis - արտաքուստ՝ միանգամայն ճիշդ դատողութիւն, որը կառուցուած է սխալ հիմքի վրայ, ուստի վերջնաւորիւնքում անպայման կերպով է պիտի:
- (3).- Աւելի մանրամասն տե՛ս «Եւրասիականութեան մեր ընկալումը», «ՎԷՄ» 2016, N 3 (55), էջ 3-8:
- (4).- Աւելի մանրամասն տե՛ս «Եռաչափ գործընթացի վտանգաւոր յետագիծը», «ՎԷՄ», 2018, N 2 (62), էջ 3-9:

ԽՐԻՄԵԱՆ ՀԱՅՐԻԿ ԵՒ ԻՐ ԺԱՄԱՆԱԿՆԵՐԸ

ՎԱՍՊՈՒՐԱԿԱՆ՝ ԱԶԳԱՅԻՆ ՎԵՐԱԾՆՈՒԹԵԱՆ ԿԵԴՐՈՆ

- ՆԵՐՍԷՍ ՊԱՏՐԻԱՐԹԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆԻՆ ՄԵՐԺՈՒՄԸ ԵՒ ԱԹՈՒՐՆ ՎՐԱՅ ՄՆԱԼՈՒ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐԱՄԱՆ

Խրիմեան Զայրիկ, եւ իր կողքին՝ Սկրտիչ Փորթուգալեան եւ ռուսական հիւպատոս Կոստանդին Կամսարական, Վասպուրականի մէջ ազատագրական գաղափարներ դարբնեցին եւ ազատատենչ ու ռազմունակ երիտասարդ սերունդ մը դաստիարակեցին:

Վանի կուսակալ Զասան փաշա քանիցս դիմեց Պոլիս՝ Բարձրագոյն դռն, Կամսարականը հեռացնել տալու համար շրջանէն: Վալին կը փաստարկեր ըսելով, որ Կամսարական ոչ թէ ռուսաց հիւպատոս է Վանի մէջ, այլ հայ յեղափոխական գործիչ մըն է:

Ի վերջոյ Կոստանդին Կամսարական Պոլսոյ մէջ Ռուսիոյ դեսպանատան միջոցով պաշտօնանկ ընել տուաւ Զասան փաշան:

Վասպուրական ազգային եւ գրական վերածնունդի շրջան մը կ'ապրէր: Փորթուգալեան, իբրեւ դաստիարակ եւ ազգային գործիչ, Զայրիկի աջ բազունն էր: Գրիգոր Արծրունիի քարոզած գաղափարները, Րաֆֆիի վէպերը, Գամառ Զաթիպայի ռազմաշունչ երգերը Փորթուգալեանի միջոցով կը տարածուէին, եւ անոր կազմակերպած հանդէսներն ու դասախօսութիւնները կը հմայէին երիտասարդութիւնը:

Վանի եւ գաւառներուն մէջ բազմաթիւ դպրոցներ բացւեցան եւ գանազան ընկերութիւններ հիմնուեցան: Ազգային ու հասարակական կեանքը եռանդով կ'ընթանար: Ժողովուրդի ազատութեան, բարօրութեան եւ դաստիարակութեան գաղափարներով տոգորուած երիտասարդութիւնը կը կազմակերպուէր:

Զայրիկ գիւղէ գիւղ կը շրջագայէր եւ ժողովուրդին մէջ մարդկային ազնիւ զգացմունքներ կ'արծարծէր: Ամէն կողմէ մարդիկ Վարազայ վանք կ'այցելէին եւ անոր խորհուրդներուն կը դիմէին:

Զայրիկ երկար ժամանակ կը տրամադրէր նամակներ գրելով, որոնք կ'ուղարկէր աշխարհի չորս կողմերը: Ան հայ ժողովուրդի տառապանքներու մասին տեղեկութիւններ կը փոխանցէր, ազգի վերածնութեան առաջադրանքով տարուող աշխատանքներու մասին պարզաբանումներ կը կատարէր եւ իր համոզումները կ'արտայայտէր:

Զայրիկ անյիշաչար գտնուեցաւ իր վաղեմի հակառակորդներուն նկատմամբ: Պօղոսեան - ապօղոսեան պայքարը չքացաւ եւ կիրքերը հանդարտեցան: Պօղոս եպիսկոպոս Լիմ անապատը բաշուեցաւ եւ այլեւս ազգային գործերուն որեւէ մասնակցութիւն ցոյց չտուաւ:

Միութեան, համերաշխութեան եւ ժողովրդանուէր գործունեութեան սկզբունքները տիրական դարձան:

Փանոս Թերլեմէզեան, որ Վանի վարժապետանոցի սաներէն



Վանի Բաղաքամէջը եւ բերրը

Սուլթան Զամիտի կողմէ Ներսես պատրիարքին ընծայուած վստահութիւնը զգայացունց տպաւորութիւն գործեց ժողովուրդին վրայ: Կասկածները փարատեցան:

Երբ կայսերական որոշումը հաղորդուեցաւ ազգին, Ազգային ժողովը 3 դէկտեմբեր 1882-ին բացառիկ Նիստ մը գումարեց եւ ցնծութեամբ ընդունեց պատրիարքին դարձը իր աթոռին վրայ:

Դեկտեմբեր 5-ին գոհաբանական աղօթքներ եւ կայսեր արեւշատութեան համար մաղթաքներ տեղի ունեցան Պոլսոյ հայոց բոլոր եկեղեցիներուն մէջ: Նոյն օրը կէսօրէ ետք սուլթանին կողմէ հազար ոսկիի ընծայ մը դրկուեցաւ պատրիարքին:

Յաջորդ օր սուլթանը պալատ հրաւիրեց պատրիարքը: Շքեղ ճաշէ մը ետք Զամիտ ունկնդրութիւն շնորհեց Ներսես սրբազանին եւ սիրոյ ու վստահութեան հաւաստիքներ շնայեց անոր: Պալատէն դուրս գալու պահուն եպարքոս Սայիտ փաշա պատրիարքին ըսաւ. «Տեսա՞ք, ես չըսի՞ ձեզի, թէ նորին վեհափառութիւնը սեր ու համակրութիւն ունի ձեր եւ ազգին հանդէպ»: Նոյն պահուն յանուն սուլթանին ականակուտ տուի մը ընծայ տրուեցաւ պատրիարքին:

Ներսես պատրիարք պալատէն ուղղակի պատրիարքարան վերա-

երեւան հասնեց Պաշտպան հայրենեաց գաղտնի կազմակերպութիւնը: 72 անձեր ձերբակալուեցան եւ դատի յանձնուեցան: Երգրումի դատարանը 51 հոգիի բանտարկութեան վճիռ տուաւ: Բանտարկեալները վերաքննութեան դիմեցին:

Ներսես պատրիարքի եւ Կարնոյ առաջնորդ Օրմանեան սրբազանի դիմումներուն վրայ 11 անձեր ալ ազատ ձգուեցան եւ յետոյ 32 հոգի եւս ներման արժանացան:

Խրիմեան Զայրիկ յաճախ պետական այս կամ այն պաշտօնատունը կը մտնէր եւ իր միջամտութեամբ հայ գիւղացիներու դատերն ու իրաւունքները կը պաշտպանէր:

Զայոց առաջնորդին այս ընթացքը եւ միջամտութիւնները Վանի պետական շրջանակներուն մէջ դժգոհութեան առիթ կու տային:

Զայրիկ իր միջամտութեամբ յաջողեցաւ ազատ արձակել տալ Թիմարի Լիմ գիւղացի Թումաշը, որ ինքնապաշտպանութեան դիմելով սպանած էր զինք սպաննել փորձող քիւրտը:

Այս դէպքէն ետք չորս քիւրտեր յարձակեցան Մանդան գիւղին վրայ եւ թալանեցին հայերու ոչխարները:

Գիւղացիք Զայրիկի դիմեցին եւ պաշտպանութիւն խնդրեցին:

Զայրիկ պատասխանեց.

- Դուք կը սպասէք, որ կառավարութիւնը ամէն գիւղի մէջ, սարերու եւ ճամբաներու վրայ պահապան, ոստիկան դնէ, որ դուք հանգիստ եւ ապահով ապրիք: Ամօ՞թ ձեզ, որ գիւղ մ'ամբողջ կրցած չէք չորս անգակ հալածել կամ բռնել, իսկ հիմա ելէր տնկօ՞ տնկօ՞ եկեր էք եւ Զայրիկէն օգնութիւն կը խնդրէք: Ես պիտի երթամ կուսակալին յայտնել դէպքի մանրամասնութիւնները, իսկ ձեզ ալ կ'ըսեմ, ալ բա՛ւ է թոյլ եւ վախկոտ մնաք, զացե՛ք զէնք առէք, զէ՛նք... զի անով է, որ պիտի պաշտպանէք ձեր անձը, պատիւն ու ստացուածքը: Զայտէ զացե՛ք եւ ըսածներս կատարեցէք:

Վանի մէջ Ռուսիոյ հիւպատոս Կոստանդին Կամսարական Խրիմեան Զայրիկի թելադրեց Վասպուրականի հայութիւնը ըմբոստութեան մղել օսմանեան պետութեան դէմ եւ Ռուսաստանի պաշտպանութեան դիմել:

Զայրիկ պատասխանեց.

- Տղա՛ւ, ժողովրդական առածը կ'ըսէ ջրէն ելանք ընկանք ջրիե-



Այգեկուրք Վանի շրջակայ Հաիպաղի գիւղին մէջ

եղած էր եւ խոր համարում ունէր Խրիմեան Զայրիկի ու Սկրտիչ Փորթուգալեանի նկատմամբ, կ'ըսէ. «Զայերս անտակտ էինք մեր հայրենասիրական ցոյցերու մէջ, որոնք, ի հարկէ, չէին վրիպէր կուսակալի ուշադրութենէ: Զայրիկն անգամ, որ Վարազի վանահայրն էր, կարծես թէ կը քաշալէրէր այդ ցոյցերը: ... Ազգային սահմանադրութեան տօնակատարութիւնները շատ վրանբաց էին: ... Տասը հազար մարդով կ'երթայինք Վարազ, ազգային դրօշակներ պարզած, հայրենասիրական երգեր երգելով: ... Փորթուգալեանն ալ ջախելութիւններ կ'ընէր: Զննութիւններու ժամանակ, կուսակալի ներկայութեանը, աշակերտները Գամառ Զաթիպայի թուրքատեաց ոտանաւորները կ'արտասանէին»:

Ներսես պատրիարք Վարժապետեան, որ 13 նոյեմբեր 1881-ին հրաժարական ներկայացուցած էր, կը շարունակէր յամառի անոր վրայ, հակառակ պետութեան եւ ազգին կողմէ եղած մերժումին:

Ազգային ժողովի 30 սեպտեմբեր 1882-ի նիստին, ներկայ 54 երեսփոխաններէ 34-ը ընդունեցին պատրիարքին հրաժարականը:

Երբ պատրիարքի հրաժարականին ընդունելութիւնը կայսերական հաւանութեան առաջարկուեցաւ, սուլթան Զամիտ բացէ ի բաց մերժեց եւ պատրիարքութիւնը շարունակելու բարձր հրաման արձակեց:

Մեծ եպարքոս Սայիտ փաշա 29 նոյեմբեր 1882-ին հրաւեր ուղղեց պատրիարքին, իր մօտ՝ Նշանթաղի ապարանք՝ խորհրդակցելու: Պատրիարքը փութաց միայնակ, բարապան մը առնելով հետը: Երեք ժամուան խորհրդակցութենէ եւ բանակցութենէ ետք, եպարքոսը հաղորդեց կայսերական անդառնալի հրամանը: Պատրիարքը պատասխանեց՝ իր դժուարութիւնները յառաջ բերելով: Պատրիարքի անձնական տկարութեան համար եպարքոսը ըսաւ, որ տեւողական հիւանդութիւն մը աշխատութեան արգելք չի կրնար ըլլալ եւ զգուշութեամբ կրնայ դարմանուիլ: Իսկ պատրիարքի անբաւականութեան համար ըսաւ, որ ազգը եւ պետութիւնը կատարեալ վստահութիւն ունին իր վրայ: Ազգային ժողովին կողմէ հրաժարականին ընդունուած ըլլալուն գծով եպարքոսը ըսաւ որ ժողովը պատրիարքէն գանգատ կամ դժգոհութիւն չէ ունեցած, եւ միայն զիջած է անոր յամառ պնդումին վրայ: Անյոյծ մնացած խնդիրներուն համար ալ եպարքոսը հաստատեց, որ երբ պատրիարքը մնայ իր պաշտօնին վրայ, անոնք աւելի դիւրա՛ւ պիտի կարգադրուին:

Ներսես պատրիարք, կայսերական բարձր հրամանին հպատակելէ գատ ուրիշ միջոց չունենալով, մեկնեցաւ:



Վանցի հացթուխներ

դարձաւ եւ մայր եկեղեցւոյ մէջ խոնուած բազմութեան հաղորդեց կայսեր խոստմնալից խօսքերը:

Յաջորդող օրերուն Պոլսոյ հայկական թերթերը իրենց առաջնորդող յօդուածներուն մէջ գարմանալի կը գտնէին սուլթանին կողմէ պատրիարքին շնորհուած այս աստիճան բացարձակ վստահութիւնը եւ անոր վերադարձը աթոռ: Չարմանք առթող գլխաւոր պատճառը կը վերաբերէր պատրիարքի դիրքին՝ հայկական հարցի արծարծման պահուն:

Իր կարգին Օրմանեան կը խորհրդածէ. «Ներսես իր հրաժարականով տարի մը ամբողջ, 1881 նոյեմբեր 13-էն մինչեւ 1882 նոյեմբեր 29, ազգը ահագին տաքնապի մէջ պահած էր, գործերուն երեսի վրայ մնալուն պատճառ եղած էր, եւ ազգին մէջ խժքծանքներու առիթը ընծայած էր: ... Ներսես հայկական խնդիրն թտեղծելէ եւ օսմանեան կայսեր եւ կառավարութեան մտքին հակառակ գործելէ, եւ լաւ աչքով չնայուելէն ետքը, ինչպէ՛ս կրցաւ կայսեր սիրելին եւ վստահելին դառնալ: Միթէ մեղադրելի փոփոխականութեամբ մը կայսեր հաճելի եւ կառավարութեան վստահելի միջոցներու ձեռնարկեց՞, կամ թէ հակառակ համբաւին կայսերական ընծաներով շահուեցա՞ւ եւ ստորաքա՛ւ, ինչպէս եղաւ հազար ոսկին եւ անկանկուտ տուփը, եւ Օրթաքէոյի տունը որ քանի մը ամիս ետքը շնորհուեցաւ»:

Օրմանեան Ներսես պատրիարքի արժանիքներէն մեկը կը նկատէ անոր ճարտարութիւնը:

Ազատութեան գաղափարները սկսած էին տարածուիլ գաւառներուն մէջ: Կարնոյ մէջ 1881 մայիսին հիմնուած էր Պաշտպան հայրենեացը, գլխաւոր նպատակ ունենալով կազմակերպուիլ, զինուիլ եւ ինքնապաշտպանութեան դիմել: Անդամներուն թիւը արագօրէն հասած էր չորս հարիւրի: Անոնց գլխաւորն էր հաշատուր Կրէկեցեան:

Պաշտպան հայրենեաց կապեր հաստատեց Խրիմեան Զայրիկի, Ներսես պատրիարքի եւ Թիֆլիսի հայ մտաւորականութեան հետ: Զայրիկ, Պաշտպան հայրենեացի անդամներուն ուղղած իր մէկ նամակին մէջ, Վանի երիտասարդութեան մօտ բռնկած ազատութեան ոգիին մասին կը գրէ. «Տակաւ տակաւ կը մեռնի անարգ եւ ստրկական ոգին եւ կը յաջորդէ ազատ եւ արիական հոգին. չորրեք հարիւրամեայ գերութեան մեռելութենէն հայն իր թաղած գլուխ կը վերցնէ. չգիտեմ, ազգին թերահաւատները կը հաւատա՞ն նորա յարութեան»:

Թրքական ոստիկանութիւնը 1882 նոյեմբերին դիպուածով մը



Բուրդ գզող կանայք Ճատախի լճաղ աւանին մէջ

դեղ: Զիմա քուկդ է, դուն չը գիտե՛ս որ եթէ ռուսը հայկական նահանգները գրաւէ մեզ չափտի տայ, այլ ռուսական նահանգի մը պիտի վերածէ եւ բարոյապէս խեղդէ մեզ եւ ջնջել տայ հայկական հարը: Աւելի աղէկ է, որ մենք Թուրքիոյ իշխանութեան ներքոյ ներքին ինքնավարութիւն մ'ունենանք, քան թէ ռուսին լուծը դնենք մեր վզին:

Կամսարականի յաջորդը՝ Վանի մէջ Ռուսիոյ հիւպատոս Կուլեպեակի Զայրիկի այցելելով անոր հարցուց. «Ինչո՞ւ ու ե՞ջմիածինը, պալատը իւր խոստումը չկատարել է յետոյ, Պոլսոյնիայով շղթայեց Կովկասի հայութեան կրօնական, կրթական եւ ազգային գործերն ու տարրական իրաւունքները եւ պրոկուրոր (բազախագ) կոչուած պաշտօնեայ մըն ալ բազմեցուց Էջմիածնի սինոտին մէջ:

Օսմանեան կառավարութիւնը կասկած ունէր որ Խրիմեան Զայրիկ ռուս պետական շրջանակներու հետ կապեր ունի եւ Վանի մէջ հակապետական վտանգաւոր գործունեութիւն կը ծաւալէ: Կասկածը սկսած էր այն օրէն, երբ Զայրիկ Ալեքսանդր Բ. ցարի սպանութեան (1 մարտ 1881) առիթով հոգեհանգիստ կատարած եւ դամբանական խօսած էր: Օր մըն ալ, 1882-ին, Զայրիկ Վանի կառավարչատունը հրաւիրուեցաւ, ուր անոր հարց տրուեցաւ.

- Իրա՛ւ է, որ ռուսական կառավարութեան դիմած էք, որ բանակ որկէ Վանը գրաւելու համար:

Զայրիկ կէս լուրջ կէս կատակ պատասխանեց.

- Եթէ վստահ ըլլայի որ ռուսական կառավարութիւնը պիտի ընդամաքէր դիմումիս, այն ատեն կը խնդրէի որ ան իր բանակը չշարժէր:

Կառավարութեան կասկածները փարատելու համար Զայրիկ քաշուեցաւ Վարազայ վանքը եւ սպա հրաժարեցաւ Վանի առաջնորդութեան իր պաշտօնէն, իրեն փոխանորդ նշանակելով Գարեգին վարդապետ Սրուանձտեանցը:

ՖՈՒԹՍԱԼԻ ՄԱՐԶԻՉՆԵՐՈՒ ԴԱՍԵՆԹԱՅՔՆԵՐՈՒՆ ԳԾՈՎ ՅԱՏՈՒԿ ՄԱՄԼՈՅ ԱՍՈՒԼԻՍ



Քասիքի Ս. Յոգի համալսարանին մէջ տեղի ունեցաւ մամլոյ ասուլիս մը, որուն ընթացքին պաշտօնապէս յայտարարուեցաւ ֆութսալի մարզիչներու յատուկ դասընթացքներուն կայացման մասին:

Անկկա տեղի պիտի ունենայ 19-21 յուլիսին, յաջորդաբար երրորդ տարին ըլլալով, հսկողութեամբ Լիբանանի ֆութսալի ֆետերասիոնին:

Լիբանանի ֆութսալի ազգային խումբերու տնօրէն Տոքի Չախխուր ընդհանուր գիծերու մէջ ներկայացուց այս դասընթացքներուն նպատակը՝ յոյս յայտնելով, որ անկկա իր դրական անդրադարձը կ'ունենայ լիբանանցի մարզիչներուն վրայ եւ անոնց որակը զգալիօրէն կը բարձրանայ:

Կազմակերպիչ յանձնախումբի նախագահ եւ Լիբանանի ֆութսալի ազգային խումբի մարզիչ Թարեք Ռըզք ըսաւ, թէ այս դասընթացքին միջոցով գլխաւոր նպատակ ունինք, մեր մարզիչներուն տալ միջազգային մակարդակ: Այս դասընթացքին մէջ մասը տեղի պիտի ունենայ Քասիքի Ս. Յոգի համալսարանին մէջ, իսկ միւս մասը՝ Լուէզի Չուք Սոսպէի վարժարանին մէջ:

Մարզիչները պիտի զան Սպանիայէն, անոնց ունին միջազգային շատ մեծ փորձառութիւն:

ԹԵՆԻՍ

ԿԱՐԵՆ ԽԱՉԱՆՈՎ ԱՌԱՋԻՆ ԱՆԳԱՄ ԲԼԼԱՆՈՎ ԳՐԱԲԵՑ 8-ՐԴ ԴԻՐՔԸ



Թենիսի միջազգային ֆետերասիոնին կողմէ հրապարակուած Նոր դասաւորման մէջ, Ռուսիոյ թիւ 1 դասուած հայազգի **թենիսէն** Կարեն Խաչանով իր արիեստավարժ ասպարէզին ընթացքին առաջին անգամ ըլլալով բարձրացաւ 8-րդ դիրքը (նախապէս՝ 9-րդ)՝ իր տրամադրութեան տակ ունենալով 2890 վարկանշային կէտ:

Առաջին դիրքին վրայ կը մնայ սերպ Դոկաք Ճոքովիչ, որ քանի մը օր առաջ տիրացաւ Ուիմպլըտընի մրցաշարքին տիտղոսին:

Ան աւելի եւս ամրապնդեց պարագլուխի դիրքը՝ ունենալով 12.415 կէտ:

Երկրորդ դիրքին վրայ գտնուող սպանացի Ռաֆայէլ Նաուպ բաւական հեռու է անկէ (7945): Իսկ երրորդ դիրքը կը գրաւէ զուիքերիացի Ռոժէ Ֆետերնէր (7460):

ԹԵՆԻՍ

ՍԻՄՈՆԱ ՀԱԼԵԹ ՊԻՏԻ ԱՐԺԱՆԱՆԱՅ ԲԱՐՉՐԱԳՈՅՆ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՐԳԵԻԻ



Նախորդ շաբաթավերջին թենիսի Ուիմպլըտընի աղջկանց կրան շլէմի միջազգային բաց մրցաշարքի տիտղոսին տիրացած Սիմոնա Հալէթի պիտի պարգեւատրուի Ռումանիոյ բարձրագոյն պետական պարգէնով, երէկ յայտնեց ռումանական մամուլը:

«Ռումանիոյ նախագահը որոշեց Ուիմպլըտընին գերազանց արդիւնքներ արձանագրած Սիմոնա Հալէթիը պարգեւատրել երկրի բարձրագոյն պարգէնով՝ աստղի շքանշանով», նշուեցաւ հաղորդագրութեան մէջ:

Նշենք, որ Ռումանիա իր վերադարձով, Պուլքեշի օդակայանին մէջ 23 տարեկան Հալէթի արժանացաւ շատ մեծ եւ ջերմ ընդունելութեան:

ԼԻԲԱՆԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԽՈՒՄԲԸ ԱԻԱՐՏԵՑ Ա. ՀԱՆԳՐՈՒՄՆԻ ԻՐ ՓՈՐՁԵՐԸ՝ ԱՐԵԻՄՏԵԱՆ ԱՍԻՈՅ ՖՈՒԹՊՈԼԻ ՄՐՑԱՇԽԱՐՔԻՆ ԳԾՈՎ

Անցնող քանի մը օրերուն, Լիբանանի ֆութսալի ազգային խումբի ռումանացի մարզիչ Լեվիո Չիոֆորթարիօ, շարունակական փորձեր կատարելէ ետք ազգային խումբ հրաւիրւած մարզիկներուն հետ, յայտարարեց, որ Արեւմուտեան Ասիոյ ֆութսալի մրցաշարքին գծով կատարուած Ա. հանգրուանի փորձերը աւարտած են: Փորձերը տեղի ունեցան Պէյրութի քաղաքապետարանի մարզադաշտին վրայ:

Այս շաբաթավերջին Պաղատաի մէջ (Իրաք) տեղի կ'ունենայ մրցաշարքին վիճակաձգութիւնը, մինչ մրցումները, որոնք տեղի պիտի ունենան Զարպալա-



յի եւ Երպիլի մէջ (Իրաք), պիտի սկսին 2 օգոստոսին: Ռումանացի մարզիչին օգնականը՝ Ժամալ Թահա ըսաւ, որ մարզիկներու ընտրութեան աշխատանքները պիտի շարունակուին, եւ անոնց կրնան միանալ

Նորթ ալ, երբ սկսի տեղի ունենալ Լիբանանի ֆութսալի ֆետերասիոնի բաժակի մրցաշարքը:

Ան յայտնեց, որ մօտիկ ապագային պիտի հրապարակուի հաւաքականի վերջնական կազմը:

ԿԱՐԸ ԼՈՒՐԵՐ՝ ԼԻԲԱՆԱՆԵԱՆ ՖՈՒԹՊՈԼԵՆ

●ԱՅՏԻ ֆութսալիստ Ահմետ Չըրէք, երկու շաբթուան իր արձակուրդէն վերադառնալով, միացաւ Ահրի իր խմբակիցներուն՝ անոնց հետ սկսելով փորձերու:



Ան մեկնած էր Միացեալ Նահանգներ՝ փաստաթղթային եւ այլ տեսակի կարգ մը գործողութիւններ կատարելու համար: Ահրի մարզիչ Պասմէ Մարմար խումբին հետ փորձերը կը կատարէ առանց ազգային խումբին մաս կազմող մարզիկներուն:

●ԼԻԲԱՆԱՆԻ ֆութսալի ֆետերասիոնը, Նըժմէ եւ Անսար ակումբներուն ներկայացուցած առաջարկին ընդառաջելով, յառաջիկայ շաբաթ անոնց միջեւ Լիբանանի ֆութսալի բաժակի մրցաշարքին ծիրին մէջ կատարուելիք մրցումը փոխադրեց Թրիփոլիի մարզադաշտ (փոխան՝ Ճիւնիի), որպէսզի կարելի ըլլայ թիւով աւելի մեծ համակիրներու ներկայութիւնը ապահովել:

●ԴԻՄԻՍԱՅԻՆ Լիբանանի Թրիփոլի

ֆութսալի ակումբը պաշտօնական հաղորդագրութիւն մը հրապարակելով նշեց, որ իր մարզիկներուն եւ մարզիչներուն նկատմամբ ունեցած իր բոլոր պարտքերը, ամսականները, որոնք անվճար մնացած էին նախորդ տարեշրջանէն, վճարեց ամբողջութեամբ, Նոյնիակ վճարեց Նաեւ այլ տեսակի յաւելւածները, որոնք պետք էր վճարել:

Այդ վճարումները գնահատուեցան 110 հազար ամերիկեան տոլարով:

●ԱՆՍԱՐԻ հրապարակած պաշտօնական հաղորդագրութեան մը մէջ նշուեցաւ, որ ակումբը Դիւսէյն Աուստայի պայմանագրութիւնը երկարաձգեց:

Այսպիսով, ան կը դառնայ չորրորդ մարզիկը, որուն պայմանագրութիւնը կ'երկարաձգուի Հասան Սաատէն (Սոնի), Ապպաս Աթուէէն (Ունիքա) եւ Ատնան Հայտարէն ետք:

●ԼԻԲԱՆԱՆԻ Ա. դասակարգի Նորթ Շապապ Պըրժ աշխատանք կը տանի իր կազմին միացնելու Նըժմէի երեք մարզիկները, որոնք իրենց կազմէն պիտի հեռանան: Այդ երեք մարզիկներն են՝ Եուսէֆ Հաժ, Միլի Պեզզի եւ Հասան Սոհամմէն:

«ՖՈՐՄԱԼԱ-1»

«ՓԻԹ-ՍԹԱՓ»-Ի ՆՈՐ ՄՐՑԱՆԻՇ՝ 1" 91

Ինքնաշարժներու միջազգային ֆետերասիոնը՝ ՖԻԱ, իր պաշտօնական կայքին ընդմէջէն յայտարարեց, որ Նախորդ շաբաթավերջին Անգլիոյ կրան փրիին («Սիւվըրսթըն»-ի վազքուղի) «**փիթ-սթափ**»-ի Նոր մրցանիշ մը հաստատուեցաւ: «Ռետ-Պուլ»-ի խումբին կողմէ:

Արդարեւ, 12-րդ լեփին վերոնշեալ խումբի ֆրանսացի վարորդ Փիեռ Բելզլի «**փիթ-սթափ**» մտաւ, ամենէն արագը (1"



91), ինչ որ նկատուեցաւ Նոր մրցանիշ մը: Նախկին մրցանիշը կը պատկանէր «Ուիլիըմս» խումբին, որ հաստատուած էր 2016-ին (1" 92):

ԹՐՔԱԿԱՆ ԱԿՈՒՄԲԸ ՄԵԱԼ ՖՈՒԹՊՈԼԻՍՏ ՄԸ ԳՆԵՅ

Թրքական Մենմենսփոր ակումբը, որ հանդէս կու գայ Բ. դասակարգին մէջ, ծիծաղելի փոխանցում մը իրականացուցած է:

Վերոնշեալ ակումբը, մօտէն հետաքրքրուած ըլլալով փորթուգալական Գ. դասակարգին մաս կազմող Էլքըշթենսի կամպիացի յառաջապահ Ալֆա Ջալրուով, շատ արագ բանակցութիւններու ձեռնարկած է եւ անմիջապէս իր կազմին միացուցած վերոնշեալ ֆութսալիստը, որ ինքզինք շատ ուրախ գգացած է:

Սակայն ճիշդ մէկ օր ետք, թրքական ակումբը իր պայմանագրութիւնը խզած է անոր հետ՝ նկատի ունենալով, որ անոր



մօտ շփոթ ստեղծուած էր ֆութսալիստին եւ վերջինիս մականունը կրող անոր հայր-րեւնակիցին Լամինա Ջալրուի միջեւ, որ մաս կը կազմէ իտալական Սալերնիթանային (Բ. դասակարգ) եւ անոր նման՝ Կամպիոյ ազգային խումբին:

ՉԱՐԵՆՅԱՄԱՆԻ ԵՒ ԷՋՄԻԱԾԻՆԻ ՄԷՋ ՊԻՏԻ ԲԱՅՈՒԻՆ ՆՈՐԱԿԱՌՈՅՑ ՄԱՐԶԱԴՊՐՈՑՆԵՐ

Հայաստանի երիտասարդութեան եւ մարմնակրթութեան փոխնախարար՝ Գեորգ Լոռնեցեան յայտնեց, որ այս տարի Չարենցաւանի եւ Էջմիածինի մէջ պիտի բացուին մարզադպրոցներ: Երկու մարզադաշտներուն մէջ ալ ստեղծուած են բոլոր պայմանները ո'չ միայն բարձր մակարդակի փորձեր կատարելու, այլ նաեւ հանրապետական նշանակութեան մարզական միջոցառումներ կազմակերպելու համար:

Նշուեցաւ նաեւ, որ ընթացքի մէջ են Արթուր Ալեքսանեանի անուան ըմբշամարտի մարզադպրոցի կառուցման նախագիծին շուրջ աշխատանքները, որոնց վերջնական արդիւնքները ի յայտ կու գան այս ամիս:



«ՉԵՍՓԻԸՆՉ ԼԻԿ»

ԱՅՍՕՐ՝ «ԱԻՔ» - ԱՐԱՐԱՏ ԱՐՄԵՆԻԱ ԴԱՐՉԻ ՄՐՑՈՒՄԸ

«Չեմփիընզ լիկ»-ի ֆութսալի մրցաշարքի գտումի Ա. հանգրուանի դարձի մրցումներուն ծիրին մէջ, այսօր՝ չորեքշաբթի, 17 յուլիսին, Հայաստանի ֆութսալի ախոյեան Արարատ Արմենիա հիւրը պիտի ըլլայ «ԱԻՔ»-ի խումբին, որ իր կարգին Շուէտի ախոյեանն է:

Երթի մրցումին, որ տեղի ունեցաւ Երեանի մէջ, հայրենի կազմը արձանագրեց 2-1 արդիւնքով յաղթանակ մը:

Սակայն արձանագրուած այս յաղթանակը չի նշանակեր, որ Արարատ - Արմենիա ապահոված է յաջորդ հանգրուանի իր տոմսը:

Եթէ պատահի, որ դաշտին տէրը Նոյնիակ 1-0 նուագագոյն արդիւնքով յաղթանակ մը արձանագրէ, ինչ պիտի ըլլայ ապահովողը յաջորդ հանգրուանի իր տոմսը՝ նկատի ունենալով, որ անկկա երթին մրցակիցին դաշտին վրայ կ'ող նշանակելու առաւելութենէն պիտի օգտուի:

Հետեւաբար, ասկէ մեկնելով, Հայաստանի ախոյեանին մարզիկները ոչ մէկ կ'ող ստանալով իրենց բերդին մէջ կրնան յաջողիլ անցնիլ գտումի Բ. հանգրուան:

ՊԱՔԵԹՊՈԼ. ԵՐՐՈՊԱՅԻ 20 ՏԱՐԵԿԱՆԵՆ ՎԱՐ ԱՌՈՅԵԱՆՈՒԹԻՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ՀԱՄԱՔԱԿԱՆԸ ԿՐԵՑ ԻՐ ՉՈՐՐՈՐԴ ՅԱՋՈՐԴԱԿԱՆ ԾԱՆՐ ՊԱՐՏՈՒԹԻՒՆԸ



Փորթուգալի մէջ տեղի ունեցող Եւրոպայի տղոց պասքեթպոլի 20 տարեկանէն վար ախոյեանութեան ծիրին մէջ (Բ. դասակարգ), Հայաստանի ազգային հաւաքականը, որ կատարեց իր չորրորդ մրցումը, կրեց իր չորրորդ յաջողական ծանր պարտութիւնը, այս անգամ Եսթոնիայէն՝ 99-41 արդիւնքով:

Հայաստան յաջորդաբար պարտուած էր Շուէտէն (149-26), Վրաստանէն (98-46) եւ Զոսովոյէն (97-40):

Վերջին մրցումին գլխաւոր մարզիչ Տիգրան Զոթանեանի կազմը կը մրցի Զոլանտայի դէմ:

«ԵՐՐՈՊԱՅԻ ԼԻԿԱ»

ԲԱՆԱՆՅ ԾԱՆՐ ՊԱՐՏՈՒԹԵԱՄԲ ՀՐԱԺԵՇՏ ՏՈՒԱԻ ՄՐՑԱՇԽԱՐՔԻՆ



«Եւրոպայի լիկա»-ի ֆութսալի մրցաշարքի գտումի Ա. հանգրուանի դարձի մրցումներուն ծիրին մէջ, երէկ երեկոյեան Բանանց իր դաշտին վրայ հիւրընկալեց Չուքարիքին (Պելկրատ):

Երթին մրցակիցին դաշտին վրայ 3-0 արդիւնքով պարտութիւն մը կրած Բանանց երեկուան մրցումին կրեց աւելի ծանր պարտութիւն մը, այս անգամ՝ 5-0 արդիւնքով, եւ հրաժեշտ տուաւ մրցաշարքին:

«ԹՈՒՐԲԻՈՅ ԴԷՄ ՈՐԵՒԷ ՈՐՈՇՈՒՄ ՊԵՏԻ ԱՒԵԼՅՆԷ ԱՐԵՒԵԼԵԱՆ ՄԻՋԵՐԿՐԱԿԱՆԻ ՄԷՋ ՊԵՂՄԱՆ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ»

Կ'ԸՍԷ ԶԱՌՈՒԾՈՂՈՒ

Թուրքիոյ արտաքին գործոց նախարար Մելուք Զաւուշօղլու յայտարարեց. «Պիտի աճեցնենք մեր ազդուութիւնն ու գործողութիւնները արեւելեան Միջերկրականի մէջ: Թուրքիոյ դէմ առած Եւրոպական Միութեան քայլերը Կիպրոս կղզիի յունական կողմը գիտացնելու համար է»:



Թրքական դիւանագիտութեան պետը նշեց, որ իրենք այդ որոշումները լուրջի չեն առնէր եւ «Թուրքիոյ դէմ որդեւ որոշում պէտք չէ գործողութիւններու յաւելման պիտի առաջնորդէ»:

«Մենք Միջերկրական ծովու արեւելքը պեղման երեք լաւեր ունինք եւ չորրորդը պիտի ուղարկենք», աւելցուց ան՝ ընդգծելով. «Թուրքիան պիտի պաշտպանէ Կիպրոսի մէջ թուրքերուն իրաւունքները»:

Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութիւնը իր կարգին անդրադարձած է Եւրոպական խորհուրդի՝ Թուրքիոյ դէմ պատժամիջոցներ հաստատելու որոշումին եւ յայտարարած, թէ այդ պատժամիջոցները ոչ մէկ ձեռով կրնան ազդել Թուրքիոյ վճռականութեան վրայ: Այս մասին կը հաղորդէ թրքական պետական «Անատոլու» լրատու գործակալութիւնը:

«Եւրոպական Միութեան արտաքին յարաբերութիւններու խորհուրդին տուած որոշումները ոչ մէկ ձեռով կրնան ազդել Թուրքիոյ կողմէ Միջերկրականի արեւելեան շուրջերուն մէջ իրականացուող աշխատանքներուն վրայ»:

«Այս որոշումները ցոյց կու տան, որ խօսք անգամ չկայ Կիպրոս կղզիի բնական պաշարներուն նկատմամբ հաւասար իրաւունքներ ունեցող կիպրացի թուրքերու մասին, այնպիսի տպաւորութիւն է, թէ կիպրացի թուրքերը գոյութիւն չունին, եւ կ'երեւի Եւրոպական Միութեան՝ Կիպրոսի հարցին մէջ կողմնակալութիւնն ու նախապաշարումը», նշուած է Թուրքիոյ արտաքին գործոց նախարարութեան յայտարարութեան մէջ:

ԾՈՎԱՔԷՆՆԵՐԸ ԳԵՐԻ ԲՈՆԱԾ ԵՆ 10 ԹՈՒՐԲԵՐ



Նիկերիոյ մէջ թրքական նաւ մը ծովահէններու կողմէ յարձակումի ենթարկուած է: Թուրքիոյ 10 քաղաքացիներ գերի բռնուած են: Այս մասին կը հաղորդէ «Սփոթսիք»-ի թրքական ծառայութիւնը:

Թրքական նաւը կ'ուղևորուէր Քամերուն Տուալա նաւահանգիստէն Ապիճանի նաւահանգիստ: «Փաքսոյ-1» բեռնատար նաւուն մէջ, որ նաւարկման ժամանակ դատարկ էր, կը գտնուէր միայն նաւու 10 հոգիներէ բաղկացած անձնակազմը:

Ըստ նախնական տուեալներու, զոհեր կամ վիրաւորներ չկան: Աշխատանք կը տարուի Թուրքիոյ քաղաքացիներուն ազատ արձակման ուղղութեամբ:

ԸՍՏ ԺՐԻՆՈՎԱՅԵՐԻ

ԷՐՏՈՂԱՆ ԻՐԵՆ ԸՍԱԾ Է, ԹԷ Կ'ՈՒՋԷ ԴՈՒՐՍ ԳԱԼ ՕԹԱՆ-ԷՆ

Ռուսիոյ Ազատական-Ժողովրդավարական կուսակցութեան ղեկավար Վլատիմիր ժիրինկովսկի «Թելեկրամ»-ի վրայ հրապարակած է յայտարարութիւն մը, ըստ որուն, հանդիպում ունեցած է Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիպ Էրտողանի հետ, եւ ան ըսած է, թէ կ'ուզէ ՕԹԱՆ-Էն դուրս գալ: Այս մասին կը հաղորդէ «Սփոթսիք»-ի թրքական ծառայութիւնը:

«Թուրքիոյ նախագահ Ռեճեփ Թայիպ Էրտողանի հետ երկու անգամ հանդիպած եմ: Ինծի անձամբ ըսած է, թէ Թուրքիան կ'ուզէ դուրս գալ ՕԹԱՆ-Էն: Եւրոպական Միութեան անդամ դառնալ չեն ուզեր, սակայն անոնք չեն ընդունիր: Իրարու տեսել պահանջներ յառաջ կը քաշեն, սակայն չեն ընդունիր: Իսկ ՕԹԱՆ-ի մէջ առաջին ընդուն-



նունդներէն էին, որովհետեւ շրջակին մէջ Ռուսիոյ դէմ գործողութիւններ կատարելու համար յարմար էին», ըսած է ժիրինկովսկի:

ՄՈՍԿՈՒԱՆ ԴԷՄ Է ԹՈՒՐԲԻՈՅ ՆԿԱՏՄԱՄԲ ՈՐԳԵԳՐՈՒԱԾ ՄԻԱԿՈՂՄԱՆԻ ՊԱՏԺԱՄԻՋՈՅՆԵՐՈՒՆ

Մոսկուան բացասականօրէն կը վերաբերի Եւրոպական Միութեան կողմէ Թուրքիոյ դէմ Միջերկրական ծովուն մէջ իրավիճակի սրման առնչուած պատժամիջոցներ կիրարկելու որոշումին, սակայն ասիկա չի նշանակեր, թէ Ռուսիան կ'աջակցի Թուրքիոյ, որ հորատման աշխատանքներ սկսած է բացառապէս Կիպրոսի տնտեսական գօտին նկատուող տարածքին մէջ՝ բնական կազի արտահանման նպատակով: Այս մասին կը հաղորդէ «Իզվեսթիա»:

Ըստ Ռուսիոյ արտաքին գործոց փոխ-նախարար Ալեքսանտր Կրուշչովի, միակողմանի պատժամիջոցները կը հակասեն միջազգային օրէնքին եւ ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդի ընթացակարգներուն: Մոսկուա կը պնդէ, որ կիպրական հարցի լուծումով պետք է զբաղի ՄԱԿ-ի Ապահովութեան խորհուրդը:

Նախապէս, Ռուսիոյ արտաքին գործոց նախարարութիւնը իրապարակած էր յայտարարութիւն մը, որուն մէջ կը նշուէր, որ Մոսկուան մտահոգ է Կիպրոսի տնտեսական գօտին մէջ Թուրքիոյ գործողութիւններով, եւ կողմերուն կոչ կ'ուղղէ՝ զերծ մնալու քայլերէ, որոնք կրնան մագցուսի



յանգեցնել:

Յիշեցնենք, որ Եւրոպական Միութիւնը երկուշաբթի օր որոշեց Թուրքիոյ դէմ խորհրդանշական պատժամիջոցներ կիրարկել:

Չինաստանի արտաքին գործոց նախարարութեան բանբեր Կեն Շուան յայտնեց, որ Չինաստան Թուրքիոյ եւ Կիպրոսին կոչ կ'ուղղէ՝ զսպուածութիւն ցուցաբերելու եւ երկխօսութեան սկսելու Միջերկրական ծովուն մէջ հորատման աշխատանքներու հարցով, որպէսզի երկիրները խուսափին իրավիճակի մագցումէն:

ԹՈՒՐԲԻԱ ԹՈՒՆՈՒՋԻՆ 300 ՄԵԼՈՆ ՏՈԼԱՐԻ ՓՈԽԱՏՈՒԹԻՒՆ ԿԸ ԿԱՏԱՐԷ ԵՐԿՐԻՆ ՄԷՋ ԱՆՎԱՆԳՈՒԹԵԱՆ ՈՒ ՆԵՐԳՐՈՒՄՆԵՐՈՒՆ ԱՃԱՅՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ

Թունուզի մէջ Թուրքիոյ դեսպան Օմար Ֆարուք Տոդան յայտարարեց, որ իր երկիրը 300 միլիոն տուլարի փոխառութիւն մը կը կատարէ Թունուզի մէջ անվտանգութեան ու ներդրումներուն աջակցելու համար: Թրքական դեսպանատան մէջ տրուած մամուլի ասուլիսի ընթացքին ան յայտնեց, որ այդ փոխառութեան 200 միլիոն տուլարը պիտի յատկացուի անվտանգութեան մարզին, իսկ 100 միլիոն տուլարն ալ ծրագրուելու ֆինանսաւորման:

Թուրքիոյ դեսպանը շեշտեց Թուրքիոյ եւ Թունուզի միջեւ բոլոր մարզերուն մէջ, մասնաւորաբար տնտեսական մարզին մէջ երկկողմանի գործակցութեան կարեւորութիւնը:



ԲՐԻՏԱՆԻԱ ԿԸ ԲԱՅԱՌԷ ԱՍԱՆԺԻ ԱՐՏԱՅԱՆՋՆՈՒՄԸ ԱՅՆՊԻՍԻ ԵՐԿՐԻ ՄԸ, ՈՒՐ ՄԱՀԱՊԱՏԻԺ ԿԸ ԿԻՐԱՐԿՈՒԻ

«Ուիքիլիքս» կազմակերպութեան հիմնադիր Ճուլիան Ասանժ պիտի չարտայանձնուի այնպիսի որդեւ երկրի, ուր մահապատիժ կը կիրարկուի: ԹԱՄՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին յայտարարած է Բրիտանիոյ արտաքին գործոց փոխնախարար Ալան Տանքըն՝ Էջուատորի արտաքին գործոց նախարար Խուսէ Վալենթիայի հետ հանդիպումէն ետք:

«Ուիքիլիքս»-ի հիմնադիրը պիտի չարտայանձնուի այնպիսի որդեւ երկրի, ուր մահապատիժ կը կիրարկուի: Բրիտանիան եւ Էջուատորը այդ հարցին շուրջ համաձայնութեան եկած են», ըսած է Տանքըն:

Մինչ այդ, «Սի.Էն.Էն.» հաղորդեց, որ իր ժողովարարութեան մէջ փաստա-

թուղթեր, որոնք կը վկայեն, թէ Ասանժ համացանցահէններէն ստացած է նիւթերով թղթածրարներ, որոնք կը վերաբերին Միացեալ Նահանգներու նախագահական ընտրութեան:

Ամերիկեան պատկերասփիւռի կայանը կը նշէ, թէ Ասանժ զանոնք ստացած է Լոնտոնի մէջ Էջուատորի դեսպանատան տարածքին մէջ քանի մը «կասկածելի» հանդիպումներու ընթացքին: Չեկուցումին մէջ կան տուեալներ այն մասին, թէ Ասանժ դեսպանատանը, որմէ քաղաքական ապաստան հայցած էր, «խումբի կեդրոնի» վերածած էր եւ անձամբ զբաղած հրապարակելով այնպիսի նիւթեր, որոնք մեծ ազդեցութիւն ունեցած են Միացեալ Նահանգներու 2016-ի նախագահական ընտրութեան վրայ:

Կը նշուի, որ հակառակ դեսպանատան տարածքին մէջ գտնուելուն, Ասանժ հանդիպած է ռուսներու եւ համաշխարհային մակարդակի համացանցահէններու հետ, անոնք հանդիպումները յաճախ ժամեր տեւած են: Ան նաեւ «Ուիքիլիքս»-ի ռուսներէն նիւթեր ստանալէն ընդամենը քանի մը շաբաթ առաջ տուեալներու փոխանցման համար հզօր համակարգչային եւ համացանցային սարքաւորումներ ձեռք բերած է:

Յիշեցնենք, որ 2006-ին Ասանժ գաղտնի տեղեկութիւններ հրապարակած էր շարք մը երկիրներու կառավարութիւններու, ներառեալ՝ Միացեալ Նահանգներու գործուներութեան մասին: Չուիքերիոյ մէջ զինք մեղադրած էին



սեռային ոտնձգութիւններու համար: Վախնալով Միացեալ Նահանգներ արտայանձնուելէ՝ ան 2012-ին քաղաքական ապաստան խնդրած էր Լոնտոնի մէջ Էջուատորի դեսպանատանէն եւ շուրջ 7 տարի այնտեղ բնակած:

Ապրիլի «Ուիքիլիքս»-ի հիմնադիրը գրկուած էր դիւանագիտական ապաստանէն՝ համակցութեան վերաբերեալ միջազգային համաձայնագիրներու եւ արձանագրութիւններու բազմակի խախտումներու պատճառով, որմէ ետք բրիտանական ոստիկանութիւնը զինք ձերբակալած էր: Ան Բրիտանիոյ մէջ կը մեղադրուի 2012-ին, ըստ պահանջի, դատարանի չներկայանալու համար: 2018-ին Ուաշինկթոն բրիտանական իշխանութիւններուն զինք արտայանձնելու խնդրանք ներկայացուցած էր:

1 մայիսին Լոնտոնի դատարանը Ասանժը 50 շաբաթանա գրաւութիւններու դատապարտած էր: Կը ընտելի նաեւ կարելիութիւնը զինք արտայանձնելու Միացեալ Նահանգներուն, ուր ան համացանցահէնական գործունեութեան համար կրնայ բանտարկուիլ մինչեւ 175 տարի:

«ՀԻՒԼԷԱԿԱՆ ՀԱՄԱՋԱՅՆԱԳԻՐԻՆ ՇՈՒՐՋ ՆՈՐ ԲԱՆԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ ՊԵՏԻ ԶԿԱՏԱՐԵՆՔ. ՎԵՐՋԱՌՈՐՈՒԹԵԱՆ ՄԵՐ ՔԱՐԻԻՂԸ ՊԵՏԻ ԾԱՍԵՆՔ, ՍԱԿԱՅՆ ՈՉ ՄԵՐ ԱՐԺԱՆՊԱՏՈՒԹԻՒՆԸ»

Կ'ԸՍԷ ԶԱՌԻԺ



Իրանի արտաքին գործոց նախարար Մոհամետ ժաւատ Զարիֆ, որ Նիւ Եորք կ'այցելէ՝ մասնակցելու համար ՄԱԿ-ի տնտեսական եւ ընկերային խորհուրդի ժողովին, յայտնեց. «Իրան իրականական համաձայնագիրին շուրջ չորք բանակցութիւններ պիտի չկատարէ»:

Ան պատկերասփռուած գոյցի մը ընթացքին յայտարարեց. «Ի վերջոյ մեր քարիւղը պիտի ծախենք, սակայն երբեք՝ մեր արժանապատուութիւնը»:

«Որեւէ ճնշումի դիմաց Իրանի ընտրանքը դիմադրութիւն է, սակայն եթէ Միացեալ Նահանգներ ներկայ կացութենէն պատուով դուրս գալու միջոց կը փնտռեն, ապա ասիկա գոյութիւն ունի», ըսաւ Զարիֆ:

Իրանի արտաքին գործոց նախարարը նաեւ շեշտեց. «Լարուածութեան չենք ձգտիր, սակայն եթէ մեր դէմ յարձակում տեղի ունենայ, երբեք պիտի չտատամսինք մենք մեզ պաշտպանելու»:

Միւս կողմէ, «Պի.Պի.Սի.» հաղորդեց, որ ՄԱԿ-ի ընդհանուր քարտուղարի բանբեր Ֆարիան Յաք լրագրողներու հետ հանդիպումի ընթացքին յայտնած է, թէ ՄԱԿ մտահոգ է Նիւ Եորքի մէջ Իրանի արտաքին գործոց նախարարի տեղաշարժին սահմանափակումով:

Ան յայտնած է, որ ՄԱԿ-ի քարտուղարութիւնը ամերիկեան իշխանութիւններու որոշումին վերաբերեալ իր մտահոգութիւնը յայտնած է ամերիկեան կողմին, եւ խնդիրը կը քննարկէ ամերիկացի ու իրանցի դիւանագետներու հետ:

Նշենք, որ Միացեալ Նահանգներուն՝ Զարիֆի դէմ պատժամիջոցներ հաստատել սպառնալէն ետք, Միացեալ Նահանգներու արտաքին գործոց նախարար Մայքլ Փոմփեյ յայտարարեց, թէ Ուաշինկթոն Զարիֆին արտօնած է Նիւ Եորք մեկնիլ՝ մասնակցելու ՄԱԿ-ի տնտեսական եւ ընկերային խորհուրդի արեւելեան ժողովին, սակայն արգիլած է դուրս գալ Միտթաունի մէջ ՄԱԿ-ի մէջ Իրանի դեսպանատան 6 թաղերու սահմանէն:

Յիշեցնենք, որ Միացեալ Նահանգներ՝ իբրեւ ՄԱԿ-ը հիւրընկալող երկիր, համաձայնութիւն ունին ՄԱԿ-ի գործերով արտասահմանցի դիւանագետներուն մուտքի արտօնագիր տրամադրելու մասին եւ հազուադէպօրէն զանոնք կը մերժեն:

«ՈՉ ՈՔ ՊԱՏԱՄԻԱՆԱՏՈՒԹԵՆԷ ՊԵՏԻ ԽՈՒՄԱԺԻ»

Կ'ԸՍԷ ՎՐԱՍԱՆԻ ՎԱՐՉԱՊԵՏԸ



Թիֆլիսի մէջ 20 յունիսի հանրահաւաքի ընթացքին անկարգութիւններու գործի հետաքննութիւնը կը շարունակուի, եւ ինչպէս իրաւապահները, որոնք (ցուցարարները) ցրուելու ընթացքին գերազանցած են իրենց լիազօրութիւնները, այնպէս ալ քաղաքական գործիչները, որոնք բռնութեան կոչ ուղղած են, պիտի չխուսափին պատասխանատուութենէ: ԹԱՄՍ լրատու գործակալութիւնը կը հաղորդէ, որ այս մասին երեկ լրագրողներուն յայտնած է Վրաստանի վարչապետ Մամուքա Պախթաժե:

«Ոչ ոք անպատիժ պիտի մնայ, եւ (հետաքննութեան) հոլովոյթը, որ կ'ընթանայ 21 յունիսին ի վեր, ատոր ակնառն օրինակն է: Պատասխանատուութենէ պիտի չխուսափին նաեւ այսպէս կոչուած քաղաքական գործիչները, անպատասխանատու մարդիկ, որոնք մեր երիտասարդութեան անկեղծ բողոքը օգտագործեցին իրենց սարքիչ նպատակներուն համար», ըսած է Պախթաժե:

**ԾԱՍՈՒ ԶԲԵՂ
ՅԱՐԿԱՔԱՏԻՆՆԵՐ
ՊՈԼՈՒՆՅՈՒՄԻ ՄԷՋ**

**Նորակառոյց չենք,
յ ա ռ Կ Բ Ե Ժ Ի Ն Ե Ր՝
91-98 քառ. մեթր,
40-120 քառ. մեթր,
պարտէզով, նաեւ
տիւայլէքս 150 քառ.
մեթր:
Դեռածայն կամ
whatsapp 03-484184:**